2 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 222 (4602)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Ալիեւ կրտսերը նախընտրում է փախուստը

*ԵԱՀԿ Մինսկի խումբը հիշեցնում է ՄԱԿ-ի կանոնադրությունը ու հետո տարակուսում, որ Ադրբեջանում խոսքին տեր նախագահ չկա*

Աստանան Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպմամբ չնշանավորվեց ու ամենայն հավանականությամբ չի էլ նշանավորվի, քանի որ Ադրբեջանի նախագահի տարածքային բանակցությունների մյուս կողմում փաստացի մի անձ է, որ նախապես խոստումներ է տալիս, իսկ հետո դրանք չկարողանալով պահել՝ նախընտրում է պարզապես փախուստը:

Այդուհանդերձ, ղարաբաղյան հարցի առնչությամբ կարեւոր շեշտադրումներ ԵԱՀԿ գագաթաժողովում հնչեցին: Ամենից առաջ, որոշ առանձնահատկություններով նախորդ նմանատիպ հայտարարություններից տարբերվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարների խոսքը, որին այս անգամ միացած են նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները:



Ըստ այդմ, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները կրկին հաստատել են իրենց հանձնառությունը՝ ձգտելու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերջնական կարգավորմանը միջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի, ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկիի Եզրափակիչ ակտի, ինչպես նաեւ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի, Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի եւ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի 2009թ. հուլիսի 10-ի Լ'Աքվիլայի եւ 2010 թ. հունիսի 26-ի Մուսկոկայի հայտարարությունների հիման վրա:

*Տես էջ 2*

# «Վրաստանի նախկին սահմանների մասին խոսք լինել չի կարող»

Ռուսաստանի Դաշնությունը չի սատարի ԵԱՀԿ գագաթաժողովի եզրափակիչ փաստաթղթերում «Վրաստանի հակամարտության» մասին ձեւակերպումները: Ըստ ռուսաստանյան լրատվամիջոցների, այդ մասին հայտարարել է Ռուսաստանի արտգործնախարար **Սերգեյ Լավրովը** Աստանայում տեղի ունեցող ԵԱՀԿ գագաթաժողովի իր ելույթում:

Պատրաստակամություն հայտնելով գագաթաժողովի եզրափակիչ փաստաթղթում աջակցություն հայտնել վրացական խնդրի առնչությամբ Ժնեւյան քննարկումներին, Ռուսաստանն, այդուհանդերձ, ըստ ԱԳ նախարարի, երբեք չի համաձայնի, որ այդ քննարկումները վերաբերեն այսպես կոչված վրացական հակամարտությանը: Ըստ Լավրովի, նման կերպ են փորձում Աբխազիայի եւ Հարավային Օսիայի խնդիրները ձեւակերպել արեւմտյան երկրների ներկայացուցիչները:

Նրա խոսքերով, Ժնեւյան քննարկումներում Ռուսաստանը, ԵՄ-ը, ԱՄՆ-ն, ԵԱՀԿ-ն ու ՄԱԿ-ը միջնորդների կարգավիճակով են հանդես գալիս, իսկ բանակցային բուն գործընթացում հակամարտող կողմեր են Վրաստանը, Աբխազիան ու Հարավային Օսիան:

Լավրովն ընդգծել է, թե Աբխազիայի ու Հարավային Օսիայի լիիրավ մասնակցության փաստը հիմնավորվում է վերջիններիս ռուչակած անկախությամբ: «Տարածքային ամբողջականության ու Վրաստանի նախկին սահմանների մասին ոչ մի խոսք չի կարող լինել», հայտարարել է Լավրովը: Ա. Հ.

# Անընդունելի է որեւէ սկզբունքի առանձնացումը ընդհանուրից

Աստանայում, ի շարս տարբեր ելույթների, խոսել է նաեւ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը: Սկսելով աֆղանական հակամարտության տարածքային ԵԱՀԿ գործունեության օրինակից՝ ԱՄՆ պետքարտուղարն անդրադարձել է նաեւ այլ հակամարտություններ՝ նախ խոսելով Վրաստանի խնդիրներից: Հերթական անգամ աջակցություն հայտնելով Վրաստանի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը՝ Քլինթոնն, ըստ պետքարտուղարության պաշտոնական կայքէջի, խոսել է նաեւ մերձդնեստրյան խնդրից, ղարաբաղյան հարցից:

ԼՂ հիմնախնդրի առումով ԱՄՆ պետքարտուղարն ընդգծել է, որ այս հարցը պետք է լուծվի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մշակած հիմնարար սկզբունքների հիման վրա:

«Առաջարկված այդ տարրերը (նկատի ունենալով Ռուսաստան-ԱՄՆ-Ֆրանսիա նախագահների մակարդակով արված Լ'Աքվիլայի եւ Մուսկոկայի հայտարարությունների 6 կետերը - Ա.Հ.) մշակվել են որպես ընդհանրություն եւ այդ տարրերից որեւէ մեկի առանձնացումը մյուսների հանդեպ հավասարակշռված լուծման հասնելը կարող է դարձնել անհնար», Աստանայում հայտարարել է Քլինթոնը՝ կողմերին, ամենից առաջ Ադրբեջանին հստակորեն հասկացնելով, որ տարածքային ամբողջականությունը որեւէ պարագայում չի կարող գերակայության մեջ դրվել ինքնորոշման իրավունքի հանդեպ:

ԵԱՀԿ համանախագահ Ռուսաստանի նախագահ **Դմիտրի Մեդվեդեւը** եւս Աստանայում հայտարարել է, որ հակամարտությունների լուծումը ռազմական ճանապարհով անընդունելի է: Մեդվեդեւն առաջարկել է ԵԱՀԿ շրջանակներում մշակել միասնական այնպիսի սկզբունքներ, որոնք կիրառելի կլինեն առանց ընտրության եւ մշտապես: Որպես այդպիսիք Մեդվեդեւն առաջարկել է ուժի կիրառումից հրաժարումը, հակամարտության՝ կողմերի համաձայնությամբ կարգավորումը, բանակցային եւ միջնորդական ձեւաչափերի նկատմամբ հարգանքը, հակամարտության գոտում խաղաղ բնակչության իրավունքների հարգումը:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող եւս մեկ երկրի՝ Ֆրանսիայի վարչապետ **Ֆրանսուա Ֆիյոնը** նույն գագաթաժողովում վերահաստատել է Քլինթոնի խոսքերը, ընդգծելով, որ հակամարտութան կարգավորման սկզբունքներն ամբողջական են ու անբաժանելի:

Եվրոմիության անունից ղարաբաղյան հարցի խաղաղ կարգավորումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկած սկզբունքների հիման վրա իրականացնելուն իր աջակցությունն է հայտնել նաեւ ԵՄ խորհրդի նախագահ **Հերման Վան Ռոմպոյը**:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# 24 մլն դոլար վարկ Հայաստանին՝ էլեկտրոնային հասարակության կայացման համար

Ինչպես տեղեկացանք Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակից, երեկ ՀԲ տնօրենների խորհուրդը հաստատել է Հայաստանին տրամադրվող էլեկտրոնային հասարակության եւ նորարարություն հանուն մրցունակության վարկային ծրագիրը՝ 24 մլն դոլարի չափով: Այն կոչված է օժանդակելու քաղաքացիներին, ձեռնարկություններին եւ պետական հաստատություններին՝ լայնաշերտ ինտերնետային կապի մատչելի ծառայություններից օգտվելու հնարավորությունների ավելացմանը, այդ թվում՝ քաղաքացիների համար մատչելի համակարգիչների հասանելիության բարձրացմանը («Համակարգիչ բոլորի համար» ծրագրով):

Ա. Մ.

# Ակադեմիկոսներն՝ ի պաշտպանություն Նիկոլ Փաշինյանի

**Երեկ «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի անվտանգության եւ ազատ արձակման խնդրին են անդրադարձել ակադեմիկոսները:**

**ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Սեն Արեւշատյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, պատմական գիտությունների թեկնածու Հրանուշ Խառատյանը, պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյանը եւ էլի մի քանի տասնյակ ակադեմիկոսներ, դոկտորներ եւ պրոֆեսորներ հայտարարություն են տարածել՝ պահանջելով իշխանություններից ազատ արձակել Նիկոլ Փաշինյանին:**

**«Անկախ նրանից՝ կիսում ենք Նիկոլ Փաշինյանի քաղաքական հայացքները, թե ոչ, որպես մտավորականներ, քաղաքացիական մեր պարտքի թելադրանքով, մտահոգված ներքաղաքական ճգնաժամի հաղթահարմամբ եւ երկրի միջազգային վարկանիշով, նաեւ կարեւորելով հասարակության միասնականության ուղղությամբ ամեն մի քայլ, դիմում ենք իշխանություններին քննարկել դատապարտված լրագրողի ազատ արձակման հնարավորությունն ու լուծում տալ խնդրին», ասված է հայտարարության մեջ: Հիշեցնենք, որ նման բովանդակությամբ հայտարարություն էին տարածել նաեւ մտավորականներն ու լրագրողները:** Հ. Հ.

# Գերմանական կազմակերպություններն՝ ի պաշտպանություն թուրք գրող Դողան Աքհանլիի

Գերմանացի դոկտոր Թեսա Հոֆմանը եւ Ցեղասպանությունների դեմ եւ ժողովուրդների հաշտեցման համար խումբը, ըստ Փարիզից տեղեկացնող **Ժան Էսքիյանի**, Սպառնալիքների ենթարկված մարդկանց պաշտպանության միության հետ համատեղ կոչ են անում մասնակցել բողոքի երրորդ խաղաղ ցույցին՝ դատապարտելու թուրք գրող, մարդու իրավունքների պաշտպան, 2001-ից Գերմանիայի քաղաքացի Դողան Աքհանլիին կամայական եւ անօրինական կալանքի ենթարկումը: Ցույցը տեղի կունենա դեկտեմբերի 4-ին Բեռլինում, գերմանական խորհրդարանի մուտքի մոտ:

«Ազատություն եւ արդարություն Դողան Աքհանլիին» անվանված բողոքի ակցիաներ տեղի կունենան դեկտեմբերի 6-ին Քյոլնում, ինչպես նաեւ դեկտեմբերի 8-ին նախատեսված դատավարության նիստից առաջ Ստամբուլում:

Հիշեցնենք, որ թուրք հայտնի գրող Աքհանլին, որ ճանաչել է Հայոց ցեղասպանությունը եւ այն կոչել հենց ցեղասպանություն, ձերբակալվել է 2010 թ. օգոստոսի 10-ին Ստամբուլի օդանավակայանում, երբ այցելում էր մահամերձ հորը:

# Վարչական վերաքննիչ դատարան Հայաստանում

Դեկտեմբերի մեկից Հայաստանի Հանրապետությունում գործում է Վարչական վերաքննիչ դատարանը՝ համաձայն 2010 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի: Վճռաբեկ դատարանի մամուլի քարտուղար Ալինա Ենգոյանի հաղորդմամբ, դատարանը գործում է դատարանի նախագահի եւ 6 դատավորի կազմով: Վարչական վերաքննիչ դատարանը ներկայացված բողոքների հիման վրա վերանայելու է Վարչական դատարանի կայացրած դատական ակտերը՝ որոշումները եւ վճիռները: Վարչական դատարանի վճիռների դեմ ներկայացված բողոքները Վարչական վերաքննիչ դատարանում քննվելու են կոլեգիալ կազմով, իսկ որոշումների դեմ ներկայացված բողոքները՝ միանձնյա, գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու: Վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ բողոքները կարող են ներկայացվել Վճռաբեկ դատարան: Վարչական վերաքննիչ դատարանի նստավայրն է՝ Երեւան, Թբիլիսյան խճուղի 3/9 (Երեւանի լամպերի գործարանի հարեւանությամբ): Հիշեցնենք, որ դատարանի նախագահը Տիգրան Մուկուչյանն է: Հ. Ա.

Եթե ԱՊՊԱ, ապա ԻՆԳՈ

ԱՊՊԱ պայմանագրեր ձեռք բերելու ժամկետի ավարտին մնացել է 29 օր:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»
ապահովագրական ընկերությունը կատարում է պայմանագրերի ձեւակերպում:

✔ ՀՀ, ք. Երեւան, Տպագրիչների 8
✔ ՀՀ, ք. Երեւան, Դեմիրճյան 38
✔ ՀՀ, ք. Երեւան, Վ. Սարգսյան 20 հասցեներով:
▼ www. ingoarmenia.am կայքում
▼ 010-59-21-21 թեժ գծով:
▼ Telcell տերմինալների միջոցով

Ինչպես նաեւ գործում է ԱՆՎՃԱՐ առաքում:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»
Մենք վճարում ենք: Մի՛շտ*

* համաձայն ապահովագրության պայմանագրի եւ պայմանների:

# Ընթացիկ

## Մարդկային կյանքը՝ «երկրորդական հարց»

### *Բանուն խորհուրդ է տալիս ՄԱԿ-ին*

Աստանայում՝ ԵԱՀԿ գագաթաժողովից առաջ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար **Պան Կի Մունը** «Ազատություն» ռադիոկայանին տված բացառիկ հարցազրույցում նշել է. «Հուսով եմ, որ կողմերը կշարունակեն բանակցությունների ընթացքում քննարկել բոլոր հարցերը: Որքան հասկանում եմ, վերջին քննարկումները որոշակի թափ են առել: Հուսով եմ, որ Ադրբեջանը եւ Հայաստանը որքան հնարավոր է արագ համաձայնության կհասնեն այս հարցի խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջը: Միաժամանակ հորդորում եմ Հայաստանին եւ Ադրբեջանին՝ ձեռնպահ մնալ շփման գծում սադրիչ քայլերից եւ հեռացնել շփման գծում գտնվող նշանառուներին: Դա օգտակար կլինի ոչ միայն հակամարտության կողմերի, այլեւ այն բոլոր խմբերի համար, որոնք լարված աշխատանքով ջանում են արագացնել խաղաղ բանակցությունները»: Անշուշտ՝ բավական տրամաբանական, խաղաղասիրական, ասել է թե՝ ՄԱԿ-ի սկզբունքներին ու էությանը համապատասխան հայտարարություն:

Ամենաներկայացուցչական այս միջազգային կառույցը բոլոր ժամանակներում էլ հանդես է եկել մարդասիրության դիրքերից (համենայն դեպս՝ ըստ հայտարարությունների) եւ խիստ կարեւորել է մարդկային կյանքի գործոնը: Եվ, հորդորը կողմերին՝ հանել դիպուկահարներին շփման գծից՝ հենց փաստում է, որ ՄԱԿ-ը շատ լավ գիտակցում է, որ հենց նրանց առկայությունն է պատճառը՝ այսքան շատ մարդկային զոհերի:

Սակայն պարզվում է, որ շփման գծում մի շարք զինվորների, անհաս քաղաքացիների կյանք խլած դիպուկահարների հեռացումը ընդամենը «երկրորդական հարց է»: Այսպես՝ ՄԱԿ-ում Ադրբեջանի ներկայացուցիչ **Ակշին Մեհդիեւը** երեկ հարցազրույց է տվել ադրբեջանական կայքերից մեկին, որտեղ հանդես է եկել՝ որպես ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ ոչ ավել, ոչ պակաս, խորհրդատու: «Ղարաբաղյան հակամարտության լուծման գործընթացում մենք, բացի ԵԱՀԿ-ից մտադիր ենք ներգրավվել նաեւ այլ միջազգային կառույցների», ասել է Մեհդիեւը՝ հավելելով, որ կոնկրետ ՄԱԿ-ում իրենք պատրաստել էին հատուկ հռչակագիր, սակայն հետագայում հետ են վերցրել: «Այժմ մենք սպասում ենք օկուպացված տարածքներ կատարած միջազգային առաքելության արդյունքներին, որից հետո կիսակցենք մեր հետագա քայլերը»: Հիշեցնենք, որ, ըստ Մինսկի խմբի համանախագահ ֆրանսիացի Ֆասիեի՝ զեկույցը՝ առաքելության արդյունքների մասին, կողմերին կներկայացվի հունվարին: Ինչեւէ: Մեհդիեւը, իհարկե, առիթը բաց չի թողել անդրադառնալու Պան Կի Մունի հայտարարությանը: Ադրբեջանցի դիվանագետը նշել է. «Ես խորհուրդ կտամ Պան Կի Մունին, որ նա, լինելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար, զբաղվի հակամարտության լուծմամբ, այլ ոչ թե երկրորդական հարցերով»: Կա երեք տարբերակ՝ կա՛մ Մեհդիեւը չի ըմբռնում կոնկրետ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի բազմիցս արած հայտարարությունները, որ «ՄԱԿ-ը չի զբաղվում ղարաբաղյան հակամարտության լուծմամբ», կա՛մ ադրբեջանցին առհասարակ չի հասկանում, որ դիպուկահարները նաեւ կրակում են ու հաճախ էլ սպանում: Բոլոր դեպքերում, պետք է նկատել, Ակշին Մեհդիեւի՝ եթե ավելի կոպիտ՝ մտավոր կարողությունները, եթե ավելի նուրբ՝ հավակնությունները առնվազն կասկածի տեղիք են տալիս: Ի դեպ, խոսելով Աստանայի գագաթաժողովից սպասելիքների մասին, Մեհդիեւը նշել է, որ «Ղարաբաղի հարցում կարելի է սպասել բեկում»: Թերեւս Ակշինը դեռ չգիտեր, որ իր իսկ նախագահը ստորագրելու է մի հայտարարություն, այնուհետեւ ելույթով հերքելու է իր իսկ ստորագրությունը՝ հակասելով «այդքան սիրելի» միջազգային հանրությանը:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

## Ալիեւ կրտսերը նախընտրում է փախուստը

*1-ին էջից*

Այստեղ հետաքրքրական է, որ եզակի անգամ ղարաբաղյան հարցի առնչությամբ հայտարարության մեջ հղում է արվում ՄԱԿ-ի կանոնադրությանը, որի պարագայում Լեռնային Ղարաբաղի հարցն ուղղակի այլընտրանք՝ բացի ինքնորոշումից, չունի, քանի որ նույն այդ կանոնադրությունը ժողովուրդների ինքնորոշումը հռչակում է որպես ՄԱԿ-ի 4 նպատակներից մեկն այն դեպքում, երբ տարածքային ամբողջականությունը որեւէ դեպքում չի կարող գերակա վիճակում լինել: Տարածքային ամբողջականության պահպանման որեւէ դրսեւորում, եթե ուղղված է ինքնորոշման իրավունքի իրացման դեմ, անընդունելի է ՄԱԿ-ի կանոնադրությամբ:




Հայտարարությունը ներկայացվում է Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի, Ֆրանսիայի վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնի, ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի անունից: Հնգակողմ հայտարարության մեջ ասվում է, որ այս կողմերը համաձայնել են, որ «ժամանակն է առավել որոշիչ ջանքեր գործադրելու ղարաբաղյան հակամարտության լուծման համար»:

Այս համատեքստում համանախագահող երկրների ներկայացուցիչները կրկին հիշեցնելով Հայաստան-Ադրբեջան-Ռուսաստան համատեղ հայտարարությունները՝ 2008թ. նոյեմբերի 2-ին Մոսկվայում եւ 2010թ. հոկտեմբերի 27-ին Աստրախանում, հորդորել են, որ «խաղաղ եւ բանակցային կարգավորումը բարգավաճում եւ անվտանգություն կբերի, եւ դա է միակ ճանապարհը՝ իրական հաշտեցում բերելու տարածաշրջանի ժողովուրդներին»:

Աջակցության պատրաստակամություն հայտնելով Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների՝ «խաղաղ կարգավորման հասնելու համար անհրաժեշտ որոշումներ ընդունելուն»՝ համանախագահող երկրները լրացուցիչ քայլեր անելու կոչ են արել՝ «բանակցությունների ավելի լավ մթնոլորտ ստեղծելու եւ տեղերում հրադադարի ամրապնդման ու վստահության ստեղծման միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ»:

Այս հայտարարությունն, ըստ Ռուսաստանի արտգործնախարար **Սերգեյ Լավրովի**՝ մինչեւ Աստանայի գագաթաժողովը «Գոլոս Ռոսիի» ռադիոկայանին տված հարցազրույցի, նախապատրաստվել էր ԵԱՀԿ միջնորդների կողմից, որպեսզի ստորագրեն նաեւ կողմերը, ինչպես եւ եղավ Աստանայում: Ըստ Լավրովի, Աստանայի գագաթաժողովից առաջ միջնորդների հանդիպումները Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարության հետ հենց այդ հայտարարության նախապատրաստմանն էին ուղղված, ինչը փաստացի դարձավ իրականություն:

Իսկ որ, ըստ Լավրովի, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը անձամբ է զբաղվում ղարաբաղյան հարցով՝ «նպատակ ունենալով մշակել համատեղ համընդգրկուն փաստաթուղթ, որը իրավականորեն պարտավորեցնող վերջնական խաղաղ համաձայնագրի հիմք կհանդիսանա», սրան հասնելու համար դեռեւս շատ ու շատ անելիքներ կան. թեկուզ այն առումով, որ Ադրբեջանի նախագահը, ըստ տարբեր աղբյուրների, որ առավելապես ճիշտ տեղեկության արտահոսք լինելու պարագան է, վերջին պահին հրաժարվել է Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների հետ հանդիպումից: Այս իրավիճակը բացատրվել է, թե Ալիեւը չի կարողացել բացատրություն գտնել նաեւ իր անունից հրապարակված հնգակողմ հայտարարության բովանդակության եւ իր ելույթում հնչած տեսակետների տարբերության համար:

Չնայած հնգակողմ հայտարարության բովանդակությանը հակասելուն՝ Աստանայի գագաթաժողովում երեկ հնչեցրած իր ելույթում Ադրբեջանի նախագահը Հայաստանին մեղադրել է պատերազմական հանցագործությունների եւ ցեղասպանությունների մեջ եւ պնդել է, որ Հայաստանը «զորավարժություններ անցկացնելով օկուպացված տարածքներում, փոխելով քաղաքների եւ գյուղերի անվանումները եւ անօրինական կերպով բնակեցնելով օկուպացված տարածքները, փորձում է իմաստազրկել խաղաղ բանակցային գործընթացը»: «Ազատություն» ռադիոկայանի աղբյուրների համաձայն, համանախագահները, որոնք ցանկանում էին կազմակերպել նախագահների հանդիպումը, «տարակուսանքի մեջ են հայտնվել»:

Կարելի է ենթադրել, որ Ադրբեջանի նախագահը ստիպված է եղել ստորագրել հայտարարությունը, իսկ հետո հայտնվել է անհարմար վիճակում ու նախընտրել չհանդիպել Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների հետ: Միեւնույն ժամանակ հստակ է, որ Ադրբեջանը, ի դեմս Ալիեւ կրտսերի, ունի մի նախագահ, որի ոչ խոսքը, ոչ էլ անգամ ստորագրությունը ոչինչ չարժեն:

Ի դեպ, երեկ էր ծրագրված նաեւ Հայաստանի նախագահի ելույթը, սակայն Ալիեւն այնքան է երկարացրել իր քարոզչությունը, որ ժամանակը չի բավականացրել հաջորդ ելույթը լսելու համար, ուստի Հայաստանի նախագահի ելույթը կլինի այսօր: Իսկ երեկ Հայաստանի նախագահն Աստանայում հանդիպել է Սլովենիայի նախագահ Դանիլո Թյուրկի հետ՝ եկող տարի Սլովենիա այցելելու հրավեր ստանալով: Սերժ Սարգսյանը հանդիպել է Եվրոմիության խորհրդի նախագահ Հերման Վան Ռոմպոյի, Մեծ Բրիտանիայի պատվիրակության ղեկավար, փոխվարչապետ Նիկ Քլեգգի եւ Սերբիայի նախագահ Բորիս Տադիչի հետ:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՄՏԱՀՈԳԻՉ*

## Ջրծաղիկի վարակի 126 դեպք Սյունիքի մարզում

**Արդեն երեք տարի հանրապետությունում հստակորեն ցուրտ եղանակին գրանցվում են ջրծաղիկ հիվանդության դեպքեր: Դա սուր, բարձր վարակելիությամբ, օդակաթիլային մեխանիզմով փոխանցվող վիրուսային հիվանդություն է, որը տարածված է ամենուր:**

**Հիվանդության գաղտնի շրջանը 21 օր է: Հիվանդությունը սովորաբար թեթեւ է ընթանում՝ ջերմություն, մաշկի բշտիկավոր ցան:**

**Հանրապետության գլխավոր վարակաբան Արա Ասոյանի գնահատմամբ՝ այս տարի հիվանդությունը գտնվում է միեւնույն մակարդակի վրա, ինչ նախորդ տարի: Նա նշում է, որ հանրապետության բոլոր մարզերում գրանցվել են հիվանդության դեպքեր: «Կանխում ենք այնքան, որքան հնարավոր է, որովհետեւ ջրծաղիկը օդակաթիլային մեխանիզմով տարածվող հիվանդություն է, եւ մարդիկ կարող են վարակվել միմյանց հետ շփվելով: Արդեն երեք տարի՝ հստակորեն ձմռանը, հիվանդության դեպքերը շատանում է, դա նորմալ է: Բնակչության 90 տոկոսը վարակվում եւ բուժվում է: Հետեւաբար անհանգստության առիթ չկա», ասաց նա «Ազգի» զրույցում:**

**Նոյեմբեր ամսին ջրծաղիկով հիվանդացության բարձրացում է նկատվել Սյունիքի մարզում. Ըստ առողջապահության նախարարության տվյալների՝ արձանագրվել է 126 դեպք:**

**Նոյեմբերի 30-ին հիգիենիկ եւ համաճարակային ծառայության Սյունիքի տեսչության որոշմամբ Կապանի թիվ 5 կրթահամալիրում մեկ օրով պարապմունքները դադարեցվել են: Կրթօջախում պարապմունքների դադարեցումը պայմանավորված էր այն փաստով, որ կրթօջախի ավելի քան 6 տասնյակ աշակերտներ հիվանդացել են ջրծաղիկով: Վարակված են հատկապես Կապան քաղաքի Հալիձոր եւ Բաղաբերդ թաղամասերի բնակիչները: Հիվանդության դեպքեր են գրանցվել նաեւ քաղաքի մի շարք մանկապարտեզներում:**

**Այս պահին դպրոցները չեն փակվել: Հիգիենիկ եւ համաճարակային ծառայության Սյունիքի տեսչության մասնագետները վաղ են համարում կատարվածը բնորոշել ջրծաղիկի համաճարակ՝ հավաստիացնելով, որ իրավիճակը հսկվում է, միեւնույն ժամանակ փաստում են, որ թվերը մտահոգիչ են:**

Հ. Հ.

## Երեխաների առեւանգման դեպք չի արձանագրվել

**Վերջին շրջանում մայրաքաղաքում լուրեր են պտտվում, թե դպրոցական երեխաների առեւանգում եւ նրանց օրգանները վաճառում են համապատասխան անձանց: Այդ լուրերը ալիքի պես տարածվում են ու արձագանքները դառնում մտահոգիչ: Մի քանի օր «Ազգի» խմբագրություն են զանգահարում անհանգստացած ծնողներ, ուսուցիչներ եւ խնդրում թերթի միջոցով ստանալ պարզաբանումներ, քանի որ որոշ ծնողներ խուսափում են անգամ դպրոց ուղարկել երեխաներին:**

**«Ազգը» փորձեց հեռախոսով պարզել, արդյոք վերջին շրջանում անհետացած դպրոցականի մասին տեղեկություն կա՞, գրանցվե՞լ է նման դեպք: Հուրախություն մեզ, ՀՀ ոստիկանությունից ստացանք պաշտոնական պատասխան, ըստ որի շրջանառվող լուրերը, ինչը հարուցել է քաղաքացիների անհանգստությունը, «ստահոդ են եւ բացարձակապես չեն համապատասխանում իրականությանը»: «Ազգը» փորձեց տեղեկություններ ստանալ նաեւ ՀՀ առողջապահության նախարարությունից: Նախարարությունը կտրականապես հերքեց այդ լուրերը, որ երեխաներին առեւանգել ու օրգանները հանձնել են բուժհիմնարկներ:**

**Նշենք, որ օրգանների փոխպատվաստումը մեր հանրապետությունում կատարվում է ՀՀ օրենքի համաձայն, խիստ հսկողություն սահմանելով եւ ստուգելով օրենքի յուրաքանչյուր տառը: Ուստի մեր հայրենակիցներին կրկին հանգստացնենք, որ շրջանառվող լուրերը չեն համապատասխանում իրականությանը:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## Ռուսաստանի օգնությունը Հայաստանին

**Այսօր Ռուսաստանը 5000 տոննա ցորեն եւ 1000 տոննա արեւածաղկի ձեթ կտրամադրի մեր երկրին: Այդ նպատակով միջոցառում կկազմակերպվի Երեւանում ՌԴ դեսպանատանը՝ դեսպան Կովալենկոյի, ինչպես նաեւ ՀՀ ու ՌԴ արտակարգ իրավիճակների նախարարությունների ղեկավարների ներկայությամբ: Միջոցառումից հետո վերոհիշյալ պաշտոնյաները կմեկնեն Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղ, որտեղ է գտնվում է մարդասիրական օգնության ողջ պաշարը՝ շարունակելու օգնության տրամադրումը:**

## «Վիվասել-ՄՏՍ»-ն առաջարկում է եւս մեկ սմարթֆոն՝ HTC Wildfire

**«Վիվասել-ՄՏՍ»-ից ստացված հաղորդագրության համաձայն, ընկերության սպասարկման կենտրոններում կարելի է ձեռք բերել նաեւ HTC Wildfire սմարթֆոնը, որն արժե 155000 դրամ: «Վիվասել-ՄՏՍ»-ի եւ «Յունիբանկի» համագործակցության շրջանակներում այն կարելի է ձեռք բերել նաեւ ապառիկ: Ձեռք բերելով նշված հեռախոսները «Վիվասել-ՄՏՍ»-ի սպասարկման կենտրոններում, բաժանորդները կարող են մասնակցել «Սմարթ բոնուս» ծրագրին եւ ստանալ 30000 դրամ բոնուսային խոսելաժամանակ:**

**Ա. Ս.**

## ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, նախկինում կուսակցական-տնտեսական գործիչ եւ Մարտունու շրջանակի 1-ին քարտուղար

**Հենրիկ Արսենի Մինասյանի**

մահվան կապակցությամբ «Գերագույն խորհուրդ» ակումբի նախագահությունը ցավակցություն է հայտնում հանգուցյալի հարազատներին եւ ընկերներին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Խորհրդային ժամանակաշրջանի հուշարձանները պետք է պահպանվեն

## *Դրանք պատմության խոսուն վկաներն են*

ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային տարածքի բազմաթիվ երկրներում խորհրդային ամեն ինչից ազատվելու փորձերը երբեմն հասնում էին անհեթեթության: Փորձելով ԽՍՀՄ հապավումը մաքրել իրենց պատմության էջերից, ոչնչացվում էին ոչ միայն հուշարձաններն ու քանդակները, այլեւ երբեմն վանդալները դիմում էին ծայրահեղ միջոցների՝ քանդում Հայրենական մեծ պատերազմում զոհված զինծառայողների գերեզմանները:

1991-ին Հայաստանի Հանրապետության հրապարակից հանվեց 70 տարի մի քանի տասնյակ պետությունների միլիոնավոր բնակչության պաշտամունքի հանդիսացող Լենինի արձանը: Հրապարակում բազմությունը շատ էր: Պահպանված կադրերում երեւում է, որ մարդիկ գիտակցում էին՝ արձանը հանվեց, սակայն դրանով Խորհրդային Միության մասին հիշողությունները չջնջվեցին: Այսօր պահպանված է միայն պրոլետարիատի առաջնորդի արձանի գլուխը Ազգային պատկերասրահի նկուղում:




Մի քանի ամիս առաջ Ուկրաինայի Զապորոժիե շրջանում խուլիգանները գլխատեցին Լենինի արձանը: Ջարդել էին արձանի գլխի հատվածն ու նետել աղբարկղը: Հուլիսին էլ Օդեսայում երիտասարդները Լենինի արձանը պարանով կապել էին մեքենայից եւ գցել պատվանդանից:

Լենինի արձանի հանդեպ վանդալիզմ արձանագրվեց նաեւ 2009թ. ապրիլի 1-ին, երբ Սանկտ Պետերբուրգում՝ Ֆիննական կայարանի դիմաց մի խումբ երիտասարդներ պայթեցրին նրա հուշարձանը:

Ռուս քանդակագործ, մոնումենտալ-դեկորատիվ քանդակագործության վարպետ Լեոնիդ Բարանովի ներկայացմամբ՝ Խորհրդային Միության մասին կան բազմաթիվ փաստաթղթեր, անուններ, սակայն չկան այդ ժամանակաշրջանը ներկայացնող հուշարձաններ, քանդակներ:

«Հուշարձաններն ու քանդակները պատմական փաստաթղթեր են, կապ չունի՝ նա լավ, թե վատ քաղաքական գործիչ էր: Քանդակները պետք է պահպանվեն: Քայլում եմ Մոսկվայի փողոցներով, եւ ինձ ոչինչ չի հիշեցնում 20 տարի առաջվա քաղաքից, ամեն ինչ փոխվել է, պատմություն չի մնացել: Մենք պետք է պահպանենք այն, ինչ որ մնացել է, Մոսկվան հսկայական քաղաք է, բայց դատարկություն է զգացվում, որովհետեւ չկան հուշարձաններ, որոնք տվյալ ժամանակաշրջանը կբնորոշեն», ասաց նա երեկ «Նովոստի» մամուլի սրահում «Խորհրդային ժամանակաշրջանի հուշարձանների ճակատագիրը: Քանդե՞լ, թե՞ պահպանել» խորագրով Երեւան-Մոսկվա-Կիեւ-Քիշնեւ տեսակամրջի ժամանակ:

Ուկրաինայի կոմկուսի պատգամավոր **Ալեքսանդր Գոլուբի** ներկայացմամբ՝ խորհրդային շրջանում կառուցված հուշարձանները միայն գաղափարախոսությամբ չէին առաջնորդվում. նրանցից շատերը արվեստի գլուխգործոցներ էին: «Եթե հուշարձանը քանդես, մի՞թե ժամանակաշրջանը կմոռացվի: Սա պարզունակ մտածելակերպ է: Հասարակությանը չեն հարցնում, երբ քանդում են այս կամ այն հուշարձանը», ասաց պատգամավորը՝ հավելելով, որ Կիեւում բազմաթիվ հուշարձաններ են քանդել: Պատգամավորը նշում է, որ Ուկրաինայի նախկին նախագահ Վիկտոր Յուշչենկոն դեմ էր խորհրդային դարաշրջանի հուշարձանների պահպանմանը, մինչդեռ նախագահական նստավայրը, որտեղ նա ապրում էր, կառուցվել էր Խորհրդային Միության ժամանակ:

Արվեստաբան Ելենա Ժիրկովան առաջարկում է պայքարել գաղափարախոսության դեմ, բայց ոչ արվեստի: «Դրանք պետք է մնան, որպեսզի ավելի ցայտուն արտացոլվեն խորհրդային բարքերն ու հասարակարգը: Չէ՞ որ յուրաքանչյուր ժամանակաշրջան իր առանձնահատկությունն ունի, իսկ դրա լավագույն արտահայտչամիջոցը արվեստն է», նշեց նա:

Ճարտարապետ **Գրիգորի Բաստնովը** այն հասարակական շարժման ակտիվիստներից էր, ովքեր դեմ էին, որ Քիշնեւի կենտրոնում Մարքսի եւ Էնգելսի արձանը քանդեին: Ճարտարապետի բնութագրմամբ՝ արձանը խորհրդային հասարակարգի գաղափարախոսություն չէր խորհրդանշում. երկու փիլիսոփաներ էին, որոնք զրուցում էին: «Բայց իշխանությունները այդ արձանի մեջ գտան գաղափարախոսություն եւ քանդեցին: Մի՞թե դրանով Մարքսի կամ Էնգելսի մասին մարդիկ մոռացան»:

Երեւանի Գեղագիտության ազգային կենտրոնի գլխավոր տնօրեն, ճարտարապետ **Լեւոն Իգիթյանի** գնահատմամբ՝ պետք է հասարակությունն իրավունք տա՝ քանդե՞լ արձանը, թե՞ ոչ: Իգիթյանը պատմում է, որ Գարեգին Նժդեհի հրապարակում կանգնած է Սպանդարյանի արձանը: «Վերջերս քաղաքապետարանում քննարկում տեղի ունեցավ, երկար բանավեճից հետո եկանք այն եզրակացության, որ արձանը կպահպանվի, սակայն այլ վայրում: Սպանդարյանը վատ մարդ չէր, նա ազնիվ հեղափոխական էր եւ ցանկանում էր օգնել ժողովրդին»:

Իգիթյանը հավելում է, որ Փարիզի ամենագեղեցիկ կամուրջներից մեկը կոչվում է Ալեքսանդրովյան: «Ֆրանսիայում չեն ամաչում իրենց պատմությունից, պահպանում են ու փոխանցում սերունդներին, իսկ մենք մեր ապագա սերունդների փոխարեն որոշում ենք, թե ինչ պետք է իմանան, ինչը՝ ոչ: Դա մեր ժառանգությունն է, կան բացարձակ արժեքներ, որ պետք է պահպանել»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Գլխավոր դատախազությունը վերաքննիչ բողոք կներկայացնի Վահան Խալաֆյանի գործով դատավճռի մի մասով

**Հայաստանի գլխավոր դատախազությունը վերաքննիչ բողոք է ներկայացնելու Չարենցավանի ոստիկանությունում Վահան Խալաֆյանի գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած վճռի դեմ՝ ոստիկանության Չարենցավանի բաժնի օպերլիազորներ Գարիկ Դավթյանի եւ Գագիկ Ղազարյանի՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու մեղադրանքի ապացույցները բավարար չհամարելու մասով:**

**Գլխավոր դատախազության մամուլի հաղորդագրության մեջ անդրադարձ է արվել դատավճռին, ըստ որի ոստիկանության քրեական հետախուզության բաժանմունքի պետ Աշոտ Հարությունյանը հանցավոր է ճանաչվել պաշտոնեական լիազորություններն անցնելու համար եւ դատապարտվել 8 տարվա ազատազրկման:**

**Իսկ նրա ենթակա Մորես Հայրապետյանը հանցավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով եւ դատապարտվել 2 տարվա պայմանական ազատազրկման, քանի որ չարաշահելով պաշտոնեական լիազորությունները, պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ՝ իր անմիջական ղեկավարին չհակադրվելու եւ նրա հետ ունեցած ծառայողական փոխհարաբերությունները պահպանելու անձնական շահագրգռվածությունից ելնելով: Մասնավորապես՝ Ա. Հարությունյանի բանավոր պահանջով 2010թ. ապրիլի 13-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, ոստիկանության Չարենցավանի բաժին է բերման ենթարկել գողություն կատարելու մեջ կասկածվող Վահան Խալաֆյանին, սակայն վերջինիս բերման ենթարկելու վերաբերյալ համապատասխան մատյաններում գրառում չի կատարել: Բացի այդ՝ ականատես լինելով Ա. Հարությունյանի կողմից Վ. Խալաֆյանի նկատմամբ կիրառվող բռնություններին՝ միջոցներ չի ձեռնարկել դրանք կանխելու ուղղությամբ:**

**Դատարանը բավարար չի համարել ոստիկանության նույն բաժանմունքի ավագ օպերլիազորներ Գարիկ Դավթյանին եւ Գագիկ Ղազարյանին պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի ապացույցները եւ նրանց մասով կայացրել է արդարացման դատավճիռ: Սակայն դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազների գնահատմամբ՝ Գ. Դավթյանին եւ Գ. Ղազարյանին մեղադրանք առաջադրելու համար ապացույցները եղել են բավարար, եւ նրանց մասով նախատեսվում է ներկայացնել վերաքննիչ բողոք:**

Ս. Խ.

*ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ*

# Երեւանցիները շուրջօրյա ջրամատակարարմանը պետք է սպասեն եւս 6 տարի

**Նախատեսվում է, որ 2016 թվականին Երեւանի բնակիչները կունենան ջրամատակարարման 95 տոկոս շարունակականություն: Այս մասին Մամուլի ազգային ակումբում երեկ ասաց «Երեւան ջուր» ՓԲԸ-ի՝ հաճախորդների հետ փոխհարաբերությունների գծով տնօրեն Գագիկ Մարգարյանը. «Այսինքն՝ 2016-ին մեր հաճախորդների 95 տոկոսը պետք է ունենա 24-ժամյա ջրամատակարարում: Ըստ պայմանագրի, որը գործում է 2006 թվականի հունիսի 1-ից, նախատեսվում էր պայմանագրային 4-րդ տարում ապահովել ջրամատակարարման 79 տոկոս շարունակականություն, բայց «Երեւան ջուրը» կարողացել է ապահովել ավելին՝ 86,7 տոկոսը՝ ժամային առումով 20,8 ժամ: «4-րդ պայմանագրային տարում սպառողների 69 տոկոսն ունեցել է 20-24 ժամ ջրամատակարարում», ավելացրեց բանախոսը:**

**Այնուհետեւ պատասխանելով լրագրողների հարցերին՝ Գագիկ Մարգարյանն անդրադարձավ 185 ծառայությանը կապված դժգոհություններին. «Ծառայության հեռախոսակենտրոնը գտնվում է մեր տնօրինության ներքո: Ստացված բոլոր հեռախոսազանգերը ձայնագրվում են: Զանգերի հոսքը մեծանում է, երբ մեծ վթարներ են լինում, քանի որ օպերատորների քանակն էլ սահմանափակ է, հետեւաբար սպառողներն այդ պահին միանալ չեն կարողանում»: «Երեւան ջուրը» այս խնդրին իրեն ձեռնտու լուծում է տվել. օպերատորների քանակն ավելացնելու փոխարեն կիրառության մեջ է դրել ինքնապատասխանիչով հեռախոսը, որպեսզի զանգահարողը հաղորդագրություն թողնի: Գագիկ Մարգարյանը դժգոհում է, որ սպառողները խուսափում են հաղորդագրություն թողնելուց: Երեւի թե այդ պատճառո՞վ է, որ «Երեւան ջուրը» չի կարողանում պատասխանել սպառողների զանգերին եւ լուծում տալ նրանց խնդիրներին: Ինչեւէ, մեղավորը սպառողն է, որը մի քանի անգամ զանգելով ու հաղորդագրություն չթողնելով՝ խանգարում է, որ մյուս սպառողներն էլ կարողանան միանալ:**

**Անդրադառնալով ջրակորուստների խնդրին՝ Գագիկ Մարգարյանը տեղեկացրեց, որ 4-րդ պայմանագրային տարվա ավարտին արձանագրվել է, որ ջրակորուստները կազմել են 83,7 տոկոս: Ջրակորուստների խնդիրն անմիջականորեն կապված է ջրագծի ցանցի մաշվածությամբ: «2120 կմ երկարությամբ ցանցը քայքայված եւ խոցելի վիճակում է, սակայն ցանցի ընդլայնումն ու գլոբալ վերակառուցումը մեր սակագնի մեջ ներառված չեն»: Քայքայված ջրագծի հասցրած վնասներն իհարկե մեծ են, բայց ջրակորուստները միայն այս հանգամանքո՞վ են պայմանավորված, եւ արդյոք բոլոր օբյեկտները վճարո՞ւմ են իրենց ծախսած ջրի համար: Լավ, վճարել-չվճարելը մի կողմ, իսկ ինչքանո՞վ է արդարացված, որ ավտոմաքրման կետերում խմելու ջրով կարելի է ավտոմեքենաներ լվանալ: Ճիշտ է, ջուրն ապրանք է, մարդը վճարում է դրա համար եւ դրանով թող անի ինչ ուզում է, բայց միեւնույն ժամանակ ջուրը նաեւ ռազմավարական ռեսուրս է: Լավ կլինի՝ ավելի շատ բարձրաձայնել այս խնդիրները եւ աշխատել դրանց լուծման ուղղությամբ:**

**Ինչ վերաբերում է ջրի սակագնի բարձրացմանը, բանախոսը նշեց, որ պետք է սպասենք ճշգրտման արդյունքներին: Հետո նոր կիմանանք՝ սակագինը դեպի վերեւ է ճշգրտվելու, թե՞ դեպի ներքեւ: Չնայած Գագիկ Մարգարյանը չնշեց, որ ջրի սակագինը բարձրանալու է, բայց բոլորս էլ գիտենք, որ սակագներն առհասարակ «ճշգրտվում են» ի վնաս սպառողի:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*ՇԻՐԱԿ*

# Հոռոմ գյուղում շարք մտավ խմելու ջրի նոր գիծը

**Դեկտեմբերի առաջին օրը Շիրակի մարզի Հոռոմ գյուղում հանդիսավորապես գործարկվեց խմելու ջրի նոր բաշխիչ ցանցը, որով լուծվելու է համայնքի 510 ընտանիքներից մոտ 470-ի կանոնավոր ջրամատակարարման խնդիրը: Մինչ այդ համայնքի բնակչությունն օգտվում էր ինքնափոր ջրհորներից եւ Մանթաշի ջրամբարից, որից վատորակ ջուր էր մատակարարվում, այն էլ՝ ընդհատումներով, իսկ վերջին երեք ամիսներին ջրամատակարարումն ընդհանրապես դադարեցված էր:**

**Բարձր ճնշման պոլիէթիլենե խողովակներով նոր ցանցի կառուցման համար, որն անվտանգ եւ որակյալ ջուր պետք է մատակարարի բնակչությանը, «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունը ներդրել է ավելի քան 5 մլն, իսկ համայնքն ինքը՝ 1,5 մլն դրամ: Անցկացվել է 1500 մետր խողովակաշար, կատարվել են նաեւ միացումները մինչեւ բնակարաններ: Գերմանական KfW բանկի «Շիրակի մարզում ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի վերականգնում» վարկային ծրագրի շրջանակներում այժմ ընթանում է ամբողջ Հոռոմ համայնքի 24-ժամյա ջրամատակարարումն ապահովելու կոչված 250 խմ տարողությամբ օրվա կարգավորիչ ջրամբարի եւ նոր ջրատարի կառուցումը՝ շուրջ 173 հազար եվրո արժեքով, որը շահագործման կհանձնվի եկող տարվա հոկտեմբերի վերջին:**

**Ինչպես ներկա լրագրողներին տեղեկացրեց «Շիրակ-ջրմուղկոյուղի» ընկերության միջազգային տեխնիկական տնօրեն Մանֆրեդ Շաուբը, հիշյալ ծրագրի արդեն հաստատված երկրորդ փուլով եկող տարի ջրամատակարարման բարելավման աշխատանքներ կկատարվեն մարզի նաեւ այլ բնակավայրերում: Առաջին նման բնակավայրը, որտեղ աշխատանքը պետք է սկսվի ձմեռային արձակուրդից հետո, լինելու է Մարալիկ քաղաքը:**

**Ի դեպ, պատասխանելով իրեն տրված հարցին՝ պրն Շաուբը նշեց, որ մեր խմելու ջրի որակը շատ լավն է: «Առողջարար եւ մաքուր ջուր է», ասաց նա:**

Գ. Մ.

# «Ամերիաբանկը» միջազգային մրցույթի եզրափակիչ փուլում

«Ամերիաբանկի» ակտիվների եւ պարտավորությունների կառավարման թիմը ֆինանսավարկային կազմակերպությունների միջեւ անցկացվող ակտիվների եւ պարտավորությունների կառավարման առցանց համաշխարհային մրցույթում (virtual Banking) դուրս է եկել եզրափակիչ փուլ: Չորրորդ տարին անընդմեջ կազմակերպվող այդ մրցույթն ունի միջազգային լայն ճանաչում:

Մրցույթը կազմակերպել է SimArc NV ընկերությունը՝ ֆինանսաբանկային ուսումնական պորտալի շրջանակներում, եւ ֆինանսավորվել է FMO-ի՝ Նիդերլանդների միջազգային զարգացման բանկի, DEG-ի՝ KfW Bankengruppe-ի (KfW բանկային խումբ) անդամի եւ PROPARCO ֆինանսների զարգացման ֆրանսիական գործակալության կողմից:

# Հռչակագիր՝ որի կարիքը չկա

Որեւէ իրադարձության մենք ավելի հաճախ վերաբերվում ենք այն ընդամենը արձանագրելով: Չենք փորձում խորանալ եւ հասկանալ, թե, ասենք, ինչո՞ւ անհրաժեշտություն ծագեց, որ հենց ԵԱՀԿ Աստանայի գագաթաժողովից առաջ Երեւանում բանավեճ սկսվի ադրբեջանական ֆիլմերի փառատոնի թեմայով: Ո՞ւմ էր դա պետք: Հնարավո՞ր է, որ մի որոշ ժամանակ անց մեզ մատուցվի եւս մեկ անակնկալ եւ այլն:

Ահա այդպես էլ լրատվամիջոցները պարզապես տեղեկացրին, որ նոյեմբերի 26-ին Ստեփանակերտում քննարկվել է մի հռչակագրի նախագիծ, որն իբր հեղինակել են Արտաքին քաղաքականության հարցերով ԼՂՀ հանրային խորհրդի փորձագետները:

Նախ, ի՞նչ ասել է Արտաքին քաղաքականության հարցերով հանրային խորհուրդ: Դա այլընտրանքային հաստատությո՞ւն է, թե՞ փորձագիտական կենտրոն: Ոչինչ պարզ չէ: Իսկ ինչ վերաբերում է Հռչակագրին, ապա այն շրջանառվել է ամիսներ առաջ: Եվ դրա հեղինակը Մանվել Սարգսյանն ու Անդրեաս Ղուկասյանն են: Նրանք էլ, ի դեպ, նախագիծը ներկայացրել են Ստեփանակերտում:

Փաստաթուղթը կոչվում է Հռչակագիր ԼՂՀ ժողովրդի խաղաղ ապրելու եւ զարգացման իրավունքի մասին: Հեղինակների կարծիքով, այն պետք է ընդունվի Արցախի Ազգային ժողովում:

Թե ի՞նչն է նրանց դրդել նման նախաձեռնության, դժվար է գուշակել: Բանն այն է, որ ԼՂՀ-ն ունի սահմանադրություն, որը եւ նրա ժողովրդի համաձայնեցված կամքի արտահայտությունն է՝ ապրել խաղաղ, ինքնիշխան, զարգացնել բնականոն հարաբերություններ բոլոր հարեւանների հետ:

Սահմանադրություն ընդունած ժողովուրդը Հռչակագրի կարիք ունի՞: Քննարկման նախաձեռնողները գտնում են, որ «դա կլինի ԼՂՀ ժողովրդի պատասխանը Մինսկի խմբի համանախագահ երկրների առաջնորդների հայտարարությանը»: Մանվել Սարգսյանը Ստեփանակերտում նույնիսկ ասել է, որ «այդ հայտարարության վերաբերյալ ԼՂՀ-ից արձագանք չի եղել»:

Սա այն դեպքն է, երբ, իրոք, «եզան տակ հորթ են փնտրում»: Բանն այն է, որ ԼՂՀ խորհրդարանի քաղաքական ուժերը դեռեւս 2008թ. տարեվերջին հանդես են եկել հայտարարությամբ, որտեղ շատ հստակ ասված է, որ «բանակցային գործընթացի կոնտեքստը ԼՂՀ-ի համար հետաքրքրություն չի ներկայացնում»: Ավելի վաղ՝ նույն տարվա ապրիլին արտգործնախարար Գեորգի Պետրոսյանը ասել է, որ «մադրիդյան սկզբունքները ԼՂՀ-ի համար անընդունելի են»:

Եթե Մանվել Սարգսյանը համարում է, որ հիշյալ անդրադարձները չեն վերաբերում ՄԽ համանախագահների եւ միջնորդ երկրների առաջնորդների հայտարարություններին եւ հստակ չեն ներկայացնում ԼՂՀ պետական, քաղաքական ու հանրային շրջանակների տեսակետը, ապա դա արդեն, ինչպես ասում են, «ընկալման խնդիր է»: Ամեն դեպքում, սակայն, որեւէ նախաձեռնություն, թվում է, պարտադիր չէ կառուցել ինչ-որ բան ժխտելու կամ ինչ-ինչ իրողություններ անտեսելու մղումով: Այսպիսի եզրահանգման համար հիմք է տալիս Ստեփանակերտում Մանվել Սարգսյանի արտահայտած այն միտքը, որ «միայն ԼՂՀ-ի ճանաչումը նրան կդարձնի գործոն»:

Եթե Արտաքին քաղաքականության հարցերով ԼՂՀ հանրային խորհուրդը ընդունում է այդ տեսակետը եւ փորձում է բավարար հող նախապատրաստել, որպեսզի հարցի քաղաքական ընկալումը տեղափոխվի այնպիսի հարթություն, որ, ահա, «Ղարաբաղն է պահանջում, որ իր անկախությունը ճանաչվի», ապա իմաստ չկա նպատակը խճողել:

Անհրաժեշտ է, որ հարցը քննարկվի հստակ դրվածքով: Իսկ դրա համար պետք է կատարել լուրջ փորձագիտական աշխատանք, որից հետո միայն ներկայանալ հանրային կամ քաղաքական շրջանակներին:

Կարելի է չկասկածել՝ այս կարգի այլ քննարկումներ լինելու են նաեւ առաջիկայում: Հայտնվելու են ամենատարբեր «նախագծեր», «ծրագրեր» եւ «խորհրդատվություններ»: Բայց լուծման ամեն մի առաջարկ պարտադիր պետք է պարունակի առաջին հերթին ենթադրվող մարտահրավերների ճշգրիտ հաշվարկն ու դրանք չեզոքացնելու հնարավորությունները:

Իսկ այժմ տեսնենք, թե ինչ է առաջարկում Հռչակագիրը: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ) ինքնիշխան ժողովրդավարական պետություն է»: Այս դրույթն ամրագրված է սահմանադրությամբ, բայց դա Հռչակագրի հեղինակներին բավարար չի թվացել, եւ նրանք ավելացրել են, որ ԼՂՀ-ն «Խորհրդային Միության իրավահաջորդն է նախկին Ադրբեջանի ԽՍՀ-ի (պետք է լիներ՝ Ադրբեջանական ԽՍՀ- Վ. Ա.) ԼՂԻՄ- ի եւ Շահումյանի շրջանի տարածքներում»: Ինչպես ասում են, հետաքրքրականն սկսվում է այստեղից:

Նախ, ինչո՞ւ ԼՂԻՄ-ը եւ Շահումյանի շրջանը հատկապես անվանված են որպես «նախկին Ադրբեջանի ԽՍՀ-ի», այսինքն՝ վերջինիս «պատկանող» միավորներ: Շահումյանի հարցում գուցե այդպես հնարավոր է ասել, բայց չէ՞ որ Լեռնային Ղարաբաղը օժտված էր ինքնավարությամբ, ուստի եւ չէր պատկանում Ադրբեջանական ԽՍՀ-ին, այլ «գտնվում էր նրա կազմում»: ԽՍՀՄ սահմանադրության մեջ, ի դեպ, օգտագործվում էր հենց «գտնվում է» ձեւակերպումը: Իսկ «գտնվելը» եւ «պատկանելը» տարբեր բաներ են: Մանավանդ որ Հռչակագրի հեղինակները ԼՂՀ-ն համարում են ԽՍՀՄ իրավահաջորդ: Ադրբեջանական ԽՍՀ-ին «պատկանած» ԼՂԻՄԻ-ի եւ Շահումյանի շրջանի «տարածքներում» անկախություն հռչակած ԼՂՀ-ն չի կարող լինել ԽՍՀՄ իրավահաջորդ, բայց նա իրավահաջորդ է, քանի որ անկախացել է ոչ թե Ադրբեջանից, այլ՝ որպես ԽՍՀՄ՝ միասնական միութենական պետության իրավական համակարգի օրինական սուբյեկտ, երբ այդ Միությունը լուծարվել է:

Երկրորդ, ըստ Հռչակագրի այդ ձեւակերպման, ԼՂՀ տարածքը սահմանափակվում է նախկին ԼՂԻՄ-ի եւ Շահումյանի շրջանի վարչական սահմաններով: Ավելին, հեղինակների կարծիքով, «ԼՂՀ պետական սահմանները կարող են փոփոխվել միջազգային իրավունքին համապատասխան, խաղաղ ճանապարհով եւ համաձայնությամբ: ԼՂՀ սահմանադրության համաձայն, մինչեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական տարածքի ամբողջականության վերականգնումը եւ սահմանների ճշգրտումը հանրային իշխանությունն իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է ԼՂՀ-ի իրավազորության ներքո»:

Այստեղ արդեն Հռչակագրի հեղինակները «սայլ են ձիու առջեւից կապել»: Նրանք, ըստ էության, իրենց իրավունք են վերապահել յուրովի մեկնաբանել ԼՂՀ հիմնական օրենք սահմանադրությունը: Այսինքն, դատելով Հռչակագրից, ԼՂՀ պետական տարածքն այն է, որի սահմաններում անկախություն է հռչակվել 1991թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով, իսկ փաստացի սահմանները «կարող են փոփոխվել միջազգային իրավունքին համապատասխան, խաղաղ ճանապարհով եւ համաձայնությամբ»:

Ոչինչ չի ասվում, թե որն է «խաղաղ ճանապարհը», ինչ է նշանակում «համաձայնությամբ» սահմաններ ենթարկել փոփոխության: Եվ՝ միջազգային իրավունքում կա՞ որեւէ ունիվերսալ նորմ, որի համապատասխան կարող են գործել սահմանների փոփոխության «խաղաղ ճանապարհի» եւ «համաձայնության» մեխանիզմները:

Որքան հայտնի է, պետություններն իրենք են որոշում իրենց սահմանները փոփոխության ենթարկելու կամ չենթարկելու հետ կապված հարցերը: Եվ բոլոր դեպքերում գերակա է դիտվում քաղաքացիների կամքի ազատ արտահայտությունը: Հնարավոր է՝ կան պետություններ, որ սահմանների, ինչպես պատերազմի ու խաղաղության հարցերի լուծումը վերապահում են խորհրդարանին, բայց դրանից սկզբունքը չի փոխվում. խորհրդարանը բարձրագույն ներկայացուցչական մարմին է, որ արտահայտում է դարձյալ բոլոր քաղաքացիների կամքը:

Այս Հռչակագրի պարագայում դա անտեսված կամ, առնվազն, հստակեցված չէ: Մինչդեռ շատ ավելի տրամաբանական եւ, ելնելով իրավիճակից, նպատակահարմար կլիներ, եթե նրանում առաջնային համարվեին ԼՂՀ ներկա փաստացի սահմանները, իսկ դրանց հնարավոր փոփոխության իրավունքը վերապահվեր բացառապես համաժողովրդական կամարտահայտությանը: Տրամաբանական է, որ եթե քաղաքացիների կամքի արտահայտության մասին ոչինչ ասված չէ, ապա, ըստ Հռչակագրի, այդպիսի «համաձայնություն» կարող է ձեռք բերվել քաղաքական որոշումների հարթությունում, այն է՝ բանակցությունների միջոցով: Այս դեպքում էլ, սակայն, անորոշ է մնում, թե ո՞ւմ է վերապահվում այդ հարցով բանակցություններ վարելու լիազորությամբ օժտելու իրավունքը:

Հռչակագրում վիճելի շատ այլ կետեր եւս կան: Բայց այն, ինչի մասին խոսվեց, ունի սկզբունքային նշանակություն: Քանի որ որեւէ հռչակագիր ենթադրում է նաեւ հետագա քայլեր: Իսկ եթե հիմք ընդունենք իրավահաջորդության, սահմանների, դրանց փոփոխության իրավունքի հետ կապված հռչակագրային ձեւակերպումները, ապա դրանցից բխում է մի մոտեցում, որն ընդհանրության մեջ ղարաբաղյան կարգավորման հայեցակարգը մոտեցնում է խաղաղ ապրելու նպատակի իրացմանը: Իսկ դա արդեն բոլորովին այլ նյութ է, եթե ավելին չասվի:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

**Ստեփանակերտ**

# Ինչպե՞ս հաղթահարել անվստահությունը

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խաղաղ բանակցությունները ընթանում են ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափում, այդ մասին գիտեն բոլորը: Արցախցիների մեծ մասի կարծիքով (բնակչության երկու երրորդը), սակայն, կառույցը հակամարտության գոտում խաղաղություն հաստատելու իրական շահագրգռվածություն չունի: Հանրային կարծիքի ուսումնասիրության բրիտանական Populus կազմակերպության իրականացրած հարցախույզը վկայում է՝ Մինսկի խմբի հանդեպ վստահություն է տածում արցախցիների մեկ քառորդից ավելի քիչ մասը:

Ի վերջո կարելի է փաստել՝ «Դա Արցախի եւ արցախցիների խնդիրն է», եւ շարունակել խաղաղության կառուցմանն ուղղված տեւական ջանքերը: Սակայն որքանո՞վ է հնարավոր հարատեւ խաղաղության ու կայունության հաստատումը, եւ ընդհանրապես կարգավորման որեւէ ձեւաչափի կիրառումը մի տարածքում, որի բնակչությունը վստահություն չի տածում այդ խաղաղության պահպանման ձեւաչափը մշակողների նկատմամբ: ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակը դաշտային երկու օգնականներով, ովքեր պարբերաբար մոնիտորինգ են իրականացնում ոչ այնքան հանգիստ ղարաբաղա-ադրբեջանական սահմանում, այն է, ինչի հետ Արցախում առաջին հերթին ասոցացվում է ԵԱՀԿ առաքելությունը:

Մինչդեռ գաղտնիք չէ, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ու խաղաղության հաստատմանն ուղղված որեւէ միջոցառման իրականացում կախված է լինելու առաջին հերթին հենց այս տարածքի բնակչության պատրաստակամությունից: Եվ որքան էլ միջնորդները խոսեն ղարաբաղյան կարգավորման «փայլուն» կամ «ոսկե» հնարավորության մասին, ակնհայտ է, որ հակամարտությունը հնարավոր չէ կախարդական փայտիկի մեկ հպումով լուծել, այն տեւական գործընթաց է, որի ընթացքում այդ կարգավորմանն առաջին հերթին պատրաստ պետք է լինեն հակամարտող կողմերի հասարակությունները:

Այս անհանգիստ տարածքում խաղաղություն ապահովելու կոչված ԵԱՀԿ-ն ինչպե՞ս կարող է ունենալ հակամարտությունում ներգրավված կողմի՝ Արցախի վստահությունն, առանց այդ տարածքի բնակչությանն իր առաքելությունը ներկայացնող թեկուզ որոշակի աշխատանքի...

Բալկանները ժամանակակից Եվրոպայի ամենաանհանգիստ հատվածն ու նրա անվտանգության հիմնական սպառնալիքը դարձան: Ուստի եւ բավականին մեծ էր ինչպես միջազգային հանրության ուշադրությունը տարածաշրջանի նկատմամբ, այնպես էլ հնարավորինս արագ կարգավորման հասնելու պատրաստակամությունը: Ուստի խաղաղության հաստատման եւ նախկին Հարավսլավիայի երբեմնի սահմանների վերաձեւման գործընթացներին զուգահեռ միջազգային հանրությունն աշխատանք սկսեց այդ խաղաղությունը ժամանակի ընթացքում հնարավորինս երաշխավորելու ուղղությամբ:

1999 թ. հունիսի 10-ին Միլոշեւիչի վարչակարգի դեմ ՆԱՏՕ-ի գործողությունների ավարտից հետո ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հետկոնֆլիկտային Կոսովոյի իրադրության շուրջը ընդունեց հայտնի 1244 բանաձեւը: Փաստաթուղթը նախկին Հարավսլավիայից պահանջում էր ինչպես ռազմական, այնպես էլ ոստիկանական ուժերը Կոսովոյից դուրս բերել: Այս տարածքում, որը ֆորմալ առումով դեռեւս Սերբիայի մաս էր համարվում, սահմանվեց ՄԱԿ-ի ներկայությունը: Մինչեւ 2005-ի հոկտեմբերը Կոսովոյում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի առաքելությունն իրականացնում էր Նորվեգիայում ՆԱՏՕ-ի մշտական ներկայացուցիչը, որից հետո այս առաքելությունը փոխարինվեց քաղաքացիականով: 2005 թ. հոկտեմբերի 24-ին Անվտանգության խորհուրդը հավանության արժանացրեց այս տարածքում քաղաքացիական գործընթաց նախաձեռնելու եւ այդ նպատակով հատուկ ներկայացուցիչ նշանակելու գլխավոր քարտուղարի մտադրությունը: Այսպես էլ սկիզբ դրվեց Ֆինլանդիայի նախկին նախագահ Մարթի Ահթիսաարիի գործունեությանը Կոսովոյում, ով եւ նախապատրաստեց երկրամասի ապագա կարգավիճակի հաստատման գործընթացը:

Նախկին Հարավսլավիայի եւս մեկ անհանգիստ հատված Բոսնիա-Հերցեգովինայում մինչեւ այժմ գործում է հատուկ ներկայացուցչի գրասենյակը, որը հիմնվել է 1995 թ. Դեյթոնի խաղաղության համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո՝ քաղաքացիական մասով պայմանագրի պահպանմանը հետեւելու նպատակով:

Խաղաղության կայացմանն ուղղված ջանքերում միջնորդների անմիջական աշխատանքը նպատակային համարվող տարածքում թերեւս այդ խաղաղության իրական ապահովման ամենամեծ երաշխիքն է: Մյուս կողմից, ինչպե՞ս կարելի է կարգավորման ուղիներ մշակել կամ քննարկել որեւէ տարածքի ճակատագիրն ու ապագա կարգավիճակն՝ առանց հաշվի նստելու այդ տարածքի բնակիչների իրական զգացումների, մտահոգությունների հետ:

Գուցե ժամանակն է արդեն, որ հակամարտության կարգավորմամբ զբաղվող հիմնական մարմինը՝ ԵԱՀԿ-ն կամ առավել նեղ ձեւաչափով Մինսկի խումբը, մշտական ներկայացուցչություն ունենան հենց Ստեփանակերտում, որի գործունեությունը թերեւս փոխի հակամարտության անմիջական կողմ հանդիսացող ժողովրդի վերաբերմունքն ինչպես կարգավորման գործընթացի, այնպես էլ կազմակերպողների նկատմամբ: Մյուս կողմից, հակամարտության բուն տարածքում իրական տրամադրություններին տիրապետելը թերեւս Մինսկի խմբին կօգնի կողմերի տեսակետներն իրապես մերձեցնող առավել արդյունավետ մեխանիզմներ մշակել՝ ի վերջո ապահովելով իրական խաղաղ կարգավորում:

**ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ**

ՌՈՒՍԱՍՏԱՆ

# Հյուրերը չեն ուզում գնալ եւ կառուցում են

***Եթե երբեւէ որեւէ ռուսական քաղաքի փողոցներում քայլել եք հին «խոպանչու» հետ, ապա նրանից լսած կլինեք «այս քաղաքը մենք ենք կառուցել» արտահայտությունը: Նշանակություն չունի՝ այդ «խոպանչին» հայ է, ուզբեկ, թե տաջիկ: Արդարության համար նկատենք, որ նա իրավացի է, որոշ չափով իհարկե: Ռուսական քաղաքների գաղտնի ու հայտնի շինարարական հրապարակներում այսօր էլ աշխատում են բազմաթիվ միգրանտներ ԱՊՀ երկրներից: Մի առիթով նրանցից մեկը՝ ազգությամբ ուզբեկ, նույնիսկ նկատեց՝ «Սամարղանդում դպրոցի ուսուցիչ էի, այստեղ ասֆալտ եմ անում, որպեսզի մոսկվացիներն իրենց շների հետ հանգիստ զբոսնեն»:***

## «Նորմալ մարդիկ»

Ինչպես օրեր առաջ նկատեց ՌԴ միգրացիոն ծառայության տնօրեն **Կոնստանտին Ռոմոդովսկին**՝ «Միգրանտները, որպես կանոն, շատ երեխաներ ունեցող նորմալ մարդիկ են, որոնք գալիս են մեր երկիր բացառապես աշխատելու»: Ռոմոդովսկին ընդգծել է, որ ամբողջ Ռուսաստանում կատարվող հանցագործությունների ընդամենը 3,5 տոկոսի հեղինակներն են միգրանտները: Շատ լավ կլիներ, եթե միգրացիոն ծառայության պետի այս հայտարարությունը փակցվեր, ասենք, մոսկովյան մետրոյի գնացքների վագոններում, որպեսզի «կապույտ աչքերով» տատիկները, հավանական հանցագործ փնտրելով՝ մանրամասն չզննեին թուխ կամ նեղաչ «նորմալ մարդկանց»:

31 տարեկան **Օբիթ Ասրորովը** Տաջիկստանից է: Նա, ինչպես ինքն է պատմում, 16 տարեկանից Մոսկվայում է. այժմ նա ղեկավարում է շինարարական բրիգադ՝ հիմնականում տաջիկներից կազմված: Իսկ կար ժամանակ, երբ Օբիթը իր այսօրվա բանվորների նման ավազով լի պարկեր էր բարձրացնում բազմահարկ շինություններ: Մի առիթով հաջողակ միգրանտը, որն արդեն միգրանտ չէ, այլ ՌԴ քաղաքացի, ասաց. «Շատ կուզենայի դառնալ պատգամավոր: Հաշվի առնելով, թե որքան տաջիկներ են այստեղ ապրում, կարծում եմ՝ կընտրվեմ»: Մոսկվան Օբիթի համար երկրորդ հայրենիքն է: «Իմ բոլոր բիզնես կապերն այստեղ են, այստեղ եմ ես սկսել իմ գործը ու իմ ապագան տեսնում եմ Մոսկվայում»

«Նորմալ մարդկանցից» են նաեւ ազգությամբ ուզբեկ Ռուստամ եւ Յուլդուզ ամուսինները: Նրանք պատահականորեն են հայտնվել Ռուսաստանում: Յուլդուզի եղբայրը, որը ՌԴ-ում աշխատանքային միգրանտ էր, մեղադրվում էր ռուս կնոջ սպանության մեջ, եւ երիտասարդ ամուսինները անմիջապես եկել են: Սկզբում ապրել են հանրակացարանում, Ռուստամը շինարարություն էր անում: Յուլդուզը հիշում է, որ ամբողջ գումարը գնում էր եղբոր դատապաշտպանի, իսկ հետո էլ... բանտում եղբորը հետեւելու վրա: Յուլդուզը բավական վատ էր արտահայտվում ռուսերեն. «Բայց մեր մերձակայքում շուկա կար, որտեղ բազմաթիվ ուզբեկներ կային, այնպես որ կարող ես նույնիսկ ռուսերեն չխոսել», հիշում է նա: Այժմ Ռուստամն ու Յուլդուզը միայն հիշում են իրենց դժվարին օրերը, երբ 40, երբեմն նույնիսկ ավելի աստիճան սառնամանիքի ժամանակ աշխատում էին բացօթյա շինհրապարակում: Ամուսինները այս ամենը հիշում են նոր գնած բնակարանում ու չեն էլ պատրաստվում վերադառնալ Ուզբեկստան:

## «Երբեմն «խալտուրա» են անում»

«Նորմալ մարդկանց» թվաքանակը Ռուսաստանում վերջին օրերին սկսել է անհանգստացնել շատ ռուս պաշտոնյաների, առաջին հերթին՝ Մոսկվայի նոր քաղաքապետ **Սերգեյ Սոբյանինին:** Օրեր առաջ, իր ենթականերին ամեն օր առավոտյան պարտադիր ժամը 8-ին աշխատանքի կանչող քաղաքապետը շրջեց Մոսկվայի հասարակական տրանսպորտի որոշ կանգառների մերձակայքում: Հաջորդ օրն իսկ նոր հրամանը պատրաստ էր. այսուհետեւ ՌԴ մայրաքաղաքի նշված հատվածներում հանվել են սննդի մատակարարման, վաճառքի եւ այլ մանր առեւտրի կետերը՝ բացառությամբ թերթի կրպակների: Նոյեմբերի 23-ին արդեն Սոբյանինը պահանջեց «հստակորեն լուծել քաղաքի միգրացիոն խնդիրները, քանի որ արդեն իսկ Մոսկվայում աշխատում են 2 մլն անլեգալ միգրանտներ»: ՌԴ միգրացիոն ծառայության տնօրեն Ռոմոդովսկին հերքել է քաղաքապետի ներկայացրած թվերը. «Մոսկվայում այսօր անլեգալ աշխատում են 200 հազար անլեգալ միգրանտներ», ասել է նա: Անշուշտ, հնարավոր է, որ Սոբյանինը մեկ զրոն պարզապես ավել է նկատել, սակայն այստեղ ավելի հնարավոր է, որ Ռոմոդովսկին է սխալվում: Նախ՝ այդ ինչպե՞ս ՌԴ միգրացիոն ծառայությունը պետք է իմանա Մոսկվայում ապրող եւ աշխատող անլեգալ միգրանտների ճիշտ թիվը: Եթե նրանք անլեգալ են, հետեւաբար որեւէ գրանցում, աշխատանքի թույլտվություն չունեն, միգրացիոն ծառայությունը պարզապես չի կարող իմանալ նրանց մասին, եթե, իհարկե, կոռումպացված չէ: Հետաքրքական կլինի պարզել, Ռոմոդովսկին անձամբ գիտի՞, թե քանի միգրանտներ են քաղաքում ապրում, աշխատում հենց «թաքնված» աշխատավայրերում ու բոլորովին դուրս չեն գալիս այնտեղից, քանի որ որեւէ փաստաթուղթ չունեն: «Այսպես ասեմ, միգրանտները երբեմն «խալտուրա» անում են, անշուշտ, հիմնականում փաստաթղթերի հետ կապված, հարկեր չեն մուծում: Այսպես՝ Ռուսաստանում այսօր ապրում են շուրջ 7 մլն միգրանտներ, որոնցից միայն 4 մլն-ն ունի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, չնայած նրանք էլ հաճախ աշխատում են կեղծիքներով: Օրինակ՝ ուկրաինացիները գալիս են, 3 ամիս աշխատում, բնականաբար հարկեր չեն վճարում եւ գնում են: Գրեթե նույնն անում են մոլդովացիները: Բայց ահա ուզբեկներն ու տաջիկները ավելի շատ են անլեգալ իրավիճակում հայտնվում», նշել է Ռոմոդովսկին՝ «մոռանալով» ավելացնել, որ ուզբեկներին ու տաջիկներին հաճախ անլեգալ իրավիճակի մեջ գցում են ՌԴ քաղաքացի գործատերերը, ասենք, խլելով անձնագրերը:

## Նոր մզկիթներ Մոսկվայում չեն լինի

Այս մասին հայտարարել է Ռուսաստանի մուֆթիների խորհրդի նախագահի **Նաֆիգուլլահ Աշիրովը.** «Այսօրվա դրությամբ նոր մզկիթների կառուցման հարցը փակ է, քանի որ հայտարարված է, որ (նկատի ունի Սոբյանինի հայտարարությունը-Հ. Ա.) նոր մզկիթի կառուցումը պետք է համաձայնեցվի տվյալ շրջանի բնակչության հետ: Իսկ այսօրվա Մոսկվայում մզկիթի կառուցման դեմ ելույթներ կլինեն», նորությունների «Ռուսական ծառայության» եթերում հայտարարել է Աշիրովը: Օրեր առաջ էլ Մոսկվայի հարավարեւելյան մասի պրեֆեկտ Վլադիմիր Զոտովը հայտարարեց, որ Տեքստիլշչիկ շրջանում նոր մզկիթի փոխարեն կկառուցվի «սոցիալական նշանակություն ունեցող որեւէ օբյեկտ»: Իր հերթին քաղաքի գլխավոր ճարտարապետ **Ալեքսանդր Կուզմինը** վստահեցրել է. «Տեքստիլշչիկում նոր մզկիթ կառուցելու հարցը վաղուց արդեն փակ է. այն չի կառուցվի»: Իսկ Նաֆիգուլլահ Աշիրովը կոչ է արել Մոսկվայի բոլոր մուսուլմաններին՝ «բաժանվել խմբերի ու աղոթքի համար նախատեսված վայրերում զբաղվել քարոզչությամբ: Սա մեզ մոտ ավելի շատ կհաջողվի, քան նոր մզկիթի կառուցումը», ասել է Աշիրովը:

Որպես վերջաբան նշենք, որ քաղաքապետ Սոբյանինի որոշմամբ եկող տարի էլ այս տարվա նման Մոսկվայում կպահպանվեն 200 հազար աշխատանքային միգրանտի քվոտաները. «Քվոտաների կրճատման մասին առայժմ անիմաստ է խոսել, դրանից ոչ ոք չի շահի: Պարզապես հաջորդ տարվանից անհրաժեշտ է խստացնել վերահսկումը աշխատանքային միգրանտներ հրավիրելու ողջ գործընթացի նկատմամբ: Ես անձամբ կզբաղվեմ այդ հարցով», եզրափակել է նախկին ԽՍՀՄ մայրաքաղաքի քաղաքապետը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ֆրանսիայի հյուպատոսը հեռացվել է գինու պատճառով

Հոնկոնգում եւ Մակաոյում Ֆրանսիայի գլխավոր հյուպատոս Մարկ Ֆոնբոստիեն պաշտոնանկ է արվել դիվանագիտական սկանդալի պատճառով: Ֆրանսպրես գործակալությունը նշում է, որ միջադեպը տեղի է ունեցել անցյալ շաբաթ, բայց մանրամասնությունները հայտնի են դարձել այժմ:

Պեկինը պահանջել է արտաքսել 46-ամյա դիվանագետին՝ նրան մեղադրելով Հոնկոնգի փակ ակումբից երկու շիշ թանկարժեք գինի գողանալու մեջ: Մամուլում այդ գինիները գնահատվում են 50 հազար հոնկոնգյան (մոտ 6,5 հազար ամերիկյան) դոլար:

Հոնկոնգի ոստիկանությունը եւ Ֆրանսիայի հյուպատոսարանը չեն հաստատել Ֆոնբոստիեի հեռացման պատճառը, բայց ավելի վաղ Ֆրանսիայի արտգործնախարարությունը հայտարարել էր, որ դիվանագետի նկատմամբ սկսվել է վարչական քննություն:

Մարկ Ֆոնբոստիեն Հոնկոնգում եւ Մակաոյում Ֆրանսիայի գլխավոր հյուպատոսի պաշտոնն զբաղեցրել է մոտավորապես 1 տարի: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ անցյալում նա աշխատել էր Հնդկաստանում Ֆրանսիայի դեսպանությունում:

ՎՐԵԺԽՆԴԻՐ

# Ինտերպոլը փնտրում է WikiLeaks-ի հիմնադրին

**Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպությունը (Ինտերպոլ) WikiLeaks կայքի հիմնադիր, ավստրալացի Ջուլիան Ասանժին ձերբակալելու կարգադրություն է արել: Ֆրանսպրեսը հիշեցնում է, որ այդ կայքը մասնագիտացած է պետական գաղտնի նյութերի հրապարակման մեջ:**

**Ինտերպոլի «կարմիր ծանուցումը» կազմակերպության անդամ բոլոր պետություններին պարտավորեցնում է իրենց տարածքում հայտնվելու դեպքում ձերբակալել կասկածյալին: Ձերբակալման դեպքում նա պետք է արտաքսվի Շվեդիա, որը ձերբակալման կարգադրության նախաձեռնողն է:**

**Շվեդիայի իրավապահ մարմինները 39-ամյա Ասանժով սկսեցին հետաքրքրվել 2010-ի օգոստոսին: Նա ամբաստանվեց բռնաբարության եւ սեռական ոտնձգությունների մեջ: Ավելի ուշ բռնաբարության մեղադրանքը հանվեց: Նոյեմբերի 18-ին Շվեդիան միջազգային հետախուզում հայտարարեց եւ Ինտերպոլին խնդրեց օգնել ձերբակալելու ենթադրյալ բռնացողին: Որոշ տեղեկությունների համաձայն, Ասանժը ներկայումս Լոնդոնում է:**

**Ավստրալացի ծրագրավորողը իրեն ուղղված մեղադրանքները կտրականապես ժխտում է: Նրա կարծիքով, քրեական գործը կապված է WikiLeaks-ի գործունեության հետ, որը 2010-ի երկրորդ կիսամյակում հրապարակել է ԱՄՆ կառավարությանը վարկաբեկող բյուրավոր փաստաթղթեր:**

# Եվրոմիությունն ընդդեմ Google-ի

**Եվրոմիությունը փաստորեն պատերազմ է հայտարարել աշխարհի ամենահզոր ինտերնետային ընկերություններից մեկին՝ Google-ը: Եվրոպացիները Google-ին մեղադրում են մենաշնորհության եւ անազնիվ մրցակցության մեջ: Google-ը իշխում է որոնողական համակարգերի ինտերնետային շուկայում եւ հենց ինքն է բացել այդ շուկան, հիշեցնում է Ֆրանսպրեսը:**





**Եվրոմիությունում լուրջ կասկածներ ունեն, որ ընկերությունը շուկայում իր առաջատար դիրքն օգտագործում է շահադիտական նպատակներով՝ ինտերնետային որոնման արդյունքների առաջին տեղում դնում է այն բիզնեսները կամ կայքերը, որոնք գովազդում են Google-ի ծառայությունները, այսինքն նրա բարեկամներն են:**

**Եվրոհանձնաժողովը հատուկ հակամենաշնորհական քննություն է սկսել որոնողական խոշորագույն համակարգի դեմ՝ վկայակոչելով Եվրոմիության թիվ 102 կանոնի խախտումը: Google-ի կենտրոնակայանը ծանուցված է ԵՄ-ի կասկածների առնչությամբ: Ընկերության ղեկավարությունը խոստացել է ըստ ամենայնի օժանդակել քննությանը: Դրա առաջին վկայությունը Google-ի կայքում հայտնված մամլո տեղեկագիրն է, որտեղ մանրամասն թվարկվում են Եվրոմիության բոլոր գանգատները:**

**Վերլուծաբանները նշում են, որ եվրոպացիների հակամենաշնորհական մեղադրանքները կարող են ԱՄՆ իշխանություններին դրդել առավել մանրակրկիտ ստուգելու Google-ի գործունեությունը: Ընկերության մրցակիցները արդեն վաղուց պահանջում են անցկացնել հակամենաշնորհական քննություն, բայց Եվրոմիության ձեռնարկումը նախադեպ է եւ կարող է խթանել Google-ի գերիշխանության դեմ պայքարի ծավալումը որոնողական շուկայում:**

# Ռումինիան եւ Մոլդովան կմիանան առաջիկա 25 տարում

**Ռումինիայի նախագահ Տրայան Բեսեսկուն հայտարարել է, որ առաջիկա 25 տարվա ընթացքում Մոլդովան կարող է մտնել Ռումինիայի կազմի մեջ, ըստ որում վերջինիս (եւ Եվրոմիության) սահմանը կանցնի Դնեստր գետով: Նախագահն այս հայտարարությունն արել է Romania Libera թերթին տված հարցազրույցում:**

**Ռումին ղեկավարի կարծիքով, իրադարձությունների նման ընթացքը կխթանի Ուկրաինայի հետագա ժողովրդավարացումը եւ Եվրոմիությանն անդամակցելու ձգտումը:**

**Բեսեսկուն նաեւ հայտարարել է, որ իր երկիրը երբեք չի ստորագրի Մոլդովայի հետ սահմանի պայմանագիր, քանի որ դա «կօրինականացներ Մոլոտով-Ռիբենտրոպ պակտը»:**

**Բացի դրանից, Ռումինիայի նախագահը հայտարարել է, որ չի վստահում Մոսկվային, քանի որ Ռուսաստանը զորք է պահում Մերձդնեստրում եւ մինչեւ 2042 թ. երկարաձգել է Սեւաստոպոլի ծովուժի ռազմակայանի վարձակալման ժամկետը: Նրա կարծիքով, Մոսկվան իր հերթին չի վստահում Բուխարեստին:**

**Բուխարեստը փաստորեն չի թաքցնում Մոլդովան Ռումինիային կցելու ցանկությունը՝ հենվելով Քիշնեւում միավորման կողմնակիցների վրա: Մոլդովայում կիրակի օրն անցկացված խորհրդարանական ընտրություններում միավորման ջատագովները մեծամասնություն ստացան:**

**Ռումինիայի հյուպատոսարանները Մոլդովայի բնակիչներին ակտիվորեն բաժանում են ռումինական անձնագրեր: Բեսեսկուի տվյալներով՝ միայն 2010-ին մոլդովացիները ստացել են ավելի քան 70 հազար ռումինական անձնագրեր: Երկու նոր հյուպատոսարանների բացումը էլ ավելի է արագացրել գործընթացը:**

**1918-ին Ռումինիան գրավեց Բեսարաբիան, իսկ 1940-ին ԽՍՀՄ-ը իրեն վերադարձրեց տարածքը Չեռնովցիի մարզի եւ Օդեսայի մարզի մի մասի հետ մեկտեղ: Բուխարեստում մինչեւ օրս շատ են խոսում «Մեծ Ռումինիայի» վերականգնման մասին, ըստ որում այդ գաղափարախոսության գլխավոր նպատակը ներկայիս Մոլդովայի տարածքն է:**

**Այդ ճանապարհին գլխավոր խոչընդոտներից մեկը համարվում է Մերձդնեստրի խնդիրը:**

# Սփյուռք

«Նորարար մը հայ թատերական արուեստէն ներս, դասական հասկացողութենէն անդին՝ արդիական ու այժմէական միջազգային թատերական դպրոց մը ամբողջ ծանօթացուց հայերէն լեզուով, հայ հան-



*Գրիգոր Սաքամյանը ելույթի պահին*

ԼՈՒՐԵՐ ՆԻՒ ԵՈՐՔԷՆ

## Մեծարուեցաւ Գրիգոր Սաքամեանը

### Արժանի յարգանք հայ բեմի արժանաւոր վաստակաւորին

դիսատեսին»: Գրիգոր Սաքամեանի մասին այսպէս կ'արտայայտուի բովանդակալից յայտագիր գրքոյկին մէջ ԹՄՄ Մհեր Մկրտչեան թատերախումբին ատենապետը՝ **Յակոբ Վարդիվառեան**:

Նոյեմբեր 21ին, Թենըֆլայի (Նիւ Ճըրզի) «Դիը Քլինթըն Ինն» հիւրանոցին մէջ Թէքէեան մշակութային միութիւնը մեծարանքի ճաշկերոյթով նշեց բեմադրիչ, դերասան ու թարգմանիչ Գրիգոր Սաքամեանի թատերական ծառայութեան 50ամեակը: Ներկայ գտնուեցան ոչ միայն թատերասէր հասարակութիւն մը, որ կէս դարու սէր եւ յարգանք տուած է Սաքամեանին, այլեւ՝ իր հետ բեմ բարձրացած ու իրեն հետ գործակցած դերասաններ ու ազգայիններ:

Հանդիսութիւնը ինքն արդէն թատերական ներկայացում մը դարձաւ, երբ Մկրտչեան թատերախումբին դերասանները սրահ բերին Գրիգոր Սաքամեանը, տիկինը՝ Մասլէնը եւ զաւակը՝ Լեւոնիկը:

Բացման խօսքն ու օրուան հանդիսավարութիւնը կատարեց ԹՄՄ Կեդրոնական վարչութեան անդամ եւ Գրիգոր Սաքամեանի բեմադրութեամբ Պէյրութի «Վահրամ Փափազեան» թատերախումբի նախկին անդամ Յակոբ Վարդիվառեան: Ան տուաւ գեղեցիկ պատկերը երբ փափազեանականներ առաջին անգամ հիւրախաղերով մեկնած էին Հայաստան ու յաջորդ առաւօտ կանուխ Գրիգորը կ'արթնցնէր դերասանները միասին վայելելու Արարատը: Ու այդ օրուընէ սկսեալ անոր եւ իր խաղընկերներու հայեացքը սեւեռած մնաց Արարատին եւ անոր լանջերուն վրայ վերածնած Հայաստանին ու ժողովուրդին: Գրիգորը մնաց անսակարկ հայրենասէր մը:

Անգլերէն լեզուով օրուան մեծարեալը ներկայացուց թատերախումբի անդամուհիներէն Դալար Շէշթեան-Սարաֆեանը:

Այնուհետեւ մէկ առ մէկ բեմ բարձրացան Սաքամեանը ճանչցող դերասաններ, վարչականներ, ընկերներ: Կարճ յիշատակելի պատահարներ, դէպքեր եւ յարգանքի խօսքեր արտասանեցին անոնք: Առաջին սրտի խօսքը կատարեց յոբելեարի դերասանուհիներէն, միջազգային ատեաններէ ներս ծանօթ հոգեբան ու Մկրտչեան թատերախումբի անդամներէն Տոքթ. Անի Գալայճեան: Յանուն ՀԲԸՄ-ի Լոս Անճելըսի «Արտաւազդ» թատերախումբին խօսք առաւ ատենապետը՝ **Արա Պաղայեան**, որ յատկապէս եկած էր կնոջ՝ Սոնիային հետ ներկայ գտնուելու այս հանդիսութեան: Սաքամեանի դերասանուհիներէն Սեդա Ճեպեճեան իր կարգին ներկայացուց անոր թատերական արուեստը եւ ունեցաւ տպաւորիչ ելոյթ: Ճեպեճեանները ամբողջ ընտանիքով անդամ են ԹՄՄ «Մկրտչեան» թատերախումբին:



*Գրիգոր Սաքամյանը Աբխազոմ Աղայի դերում:*

«Համազգային» թատերախումբի բեմադրիչ Դոկտ. Հրանդ Մարգարեան վեր առաւ Սաքամեանի կատարած թարգմանական աշխատանքին արժէքը: Քսանէ աւելի թատերական գործեր հայերէնի թարգմանած ըլլալով անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներէն՝ ան ըսաւ, թէ արդէն Սաքամեանը այլեւս մաս կը կազմէ մեր գրական աշխարհին: Մարգարեան բարձրօրէն գնահատեց Մեծագոյն Նիւ Եորքի Թէքէեան մշակ. միութեան կատարած անփոխարինելի գործը ոչ միայն թատերական կեանքէն ներս, այլեւ՝ զանազան մշակութային կեանքի մէջ, բարձրորակ եւ լուրջ ձեռնարկներու:

Երեւանի Սունդուկեան ակադեմիական թատերախումբի դերասանուհի Կարինէ Քոչարեան տուաւ իր սրտի խօսքը, ինչպէս նաեւ՝ օրուան խորհուրդին հետ ասմունքեց: Իսկ Պէյրութի Յովակիմեան-Մանուկեան եւ ապա Ամերիկեան համալսարանի դասընկերներէն Տոքթ. Յակոբ Կիւլեքճեան ներկայացուց ուսանողական անկեղծ յուշեր:

Իւրաքանչիւր խօսողէ ետք, Գրիգոր Սաքամեան մի՛շտ արտայայտուեցաւ եւ իրեն իւրայատուկ ձեւով լուրջ խօսքերն ու պատահարները անգամ զաւեշտային բնութագրումով մը համեմեց. դէպքերը այնպէս մը նկարագրեց, որ խնդուքի եւ ծիծաղի մթնոլորտ ստեղծուի, խլելով անհամար ծափեր:

Խօսք առին ՀԲԸՄ-ի Նիւ Եորքի երբեմնի «Արտաշատ» թատերախումբի դերասանուհիներէն Զուարթ Պալըքճեան եւ Միսաք Պօղոսեան, որ կը շարունակէ իր դերասանական տաղանդը հրամցնել «Մհեր Մկրտչեան» թատերախումբէն ներս, դառնալով անոր հիմնադիրներէն մէկը: Պարոն Մ. Պօղոսեան երկու շրջան վարած է ԹՄՄ մասնաճիւղին ատենապետութիւնը:

Խօսք առաւ հանրածանօթ դերասանուհի **Նորա Արմանին** եւ ներկայացուց իր յուշերը շարժապատկերի աշխարհէն, իսկ ԹՄՄ Կեդրոնական վարչութեան վարիչ-քարտուղար **Գէորգ Մարաշլեան** ներկայացուց Սաքամեանի արժանթինահայ յուշերէն, երբ ինք կը պաշտօնավարէր Պուէնոս Այրէսի ՀԲԸՄ-ի գրասենեակը: Սաքամեան երկու անգամ այցելած է եւ տեղական ուժերով բեմ հանած է ներկայացումներ:

ՀԲԸՄ-ի «Անդրանիկ» պարախումբի մենակատարներ Քարոլին Մելքոնեան եւ Յարութ Թագւորեան ներկայացուցին զաւեշտ-պար մը: Իսկ յոբելեարի դերասաններէն եւ ԹՄՄ Նիւ Եորքի մասնաճիւղի փոխ ատենապետ **Յարութ Չաքմաճեան** խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց Սաքամեանին, որ առաջին անգամ զինք հայ բեմին բերած է, սիրցուցած ու քաջալերած է, եւ յանուն մկրտչեանականներուն բաժակ բարձրացուց Գրիգորի կենացը:

Յուսկ խօսք առաւ **Գրիգոր Սաքամեան**: Ան յիսուն տարիներու վաստակովը կոչ ըրաւ սիրել հայ թատրոնը, որովհետեւ ամբողջական դպրոց մըն է այն: Շնորհակալութիւն յայտնեց Թէքէեան մշակութային միութեան, որ առաջին անգամ ըլլալով կը նշէ իր կէս դարու ծառայութիւնը:

Նոյն օրը Գրիգոր Սաքամեան ներկայ գտնուեցաւ թատերախումբին ներկայացման՝ Պարոնեանի երգախառն «Շողոքորթը» կատակերգութեան, բեմադրութեամբ՝ Գագիկ Կարապետեանի: Թատերախումբը այս ներկայացումը պատրաստած ու նուիրած էր Սաքամեանին:

ԹՄՄ «Տիգրան Սմսարեան» բաժակը, որ ամէն տարի կը տրուի Միութեան ամենէն աշխոյժ մասնաճիւղին, այս տարի յանձնուեցաւ Նիւ Եորքի մասնաճիւղին, որուն վարչականները եկան ստանալու բաժակը:

Յայտագրի աւարտին, օրուան հանդիսավարը՝ Յակոբ Վարդիվառեան, բեմ հրաւիրեց Թէքէեան մշակութային միութեան ամենավաստակաշատ մշակութային գործիչը՝ Սարգիս Փասքալեանը յանձնելու յուշատախտակը Սաքամեանին: Ան սրտաբուխ արտայայտուեցաւ իր գործընկերոջ Գրիգոր Սաքամեանին մասին:

Այս առթիւ լոյս տեսաւ բովանդակալից ալբոմ մը, ուր ներկայացուած էին Սաքամեանի թատերական կեանքին ընդհանուր պատկերը լուսանկարներով: Սաքամեան բեմադրած է 75 թատերգութիւն, խաղցած է 84 ներկայացումներու մէջ եւ հայերէն լեզուի թարգմանած է 20 թատերախաղեր:

Յիշենք որ այս հանդիսութեան ներկայ էին ՀԲԸՄ-ի, ԹՄՄ-ի եւ ՌԱԿ-ի պատասխանատուներ, ազգային բարերարներ եւ ծանօթ հասարակական գործիչներ:

Վերջապէս Գրիգոր Սաքամեան որքա՜ն սիրեց հայ բեմը, նոյնքան եւ աւելիով՝ սիրցուց զայն նոր սերունդին: Եւ այդ օրը սրահը լեցուն էր նոր սերունդի ներկայացուցիչներով:

ԹՂԹԱԿԻՑ

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈ

## Բանաստեղծները չեն ծերանում...

### Ռազմիկ Դավոյան-70



Հայ գրականության ու պոեզիայի անդաստանը 60-ականների վերջին ծաղկեց եւս մի երիտասարդ բանաստեղծով, որն այսօր բոլորել է իր 70-ամյակը: **Ռազմիկ Դավոյան**: Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում օրեր առաջ նշվեց գրող-հրապարակախոս, պետական մրցանակի դափնեկիր Ռազմիկ Դավոյանի 70-ամյակը: Դահլիճը լեփլեցուն էր դավոյանական պոեզիայի երկրպագուներով, որոնց թվում էին շատ պաշտոնատար այրեր՝ ԱԺ նախարար Հովիկ Աբրահամյան, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյան, պատգամավորներ, մտավորականներ: Երկու ժամ տեւած գրական-երաժշտական թատերականացված պոեզիայի երեկոյի ընթացքում հնչեցին նաեւ գրողի բանաստեղծական տողերով գրված երգեր:

Երեկոյի բեմադրիչ, ՀՀ արվեստի վաստ. գործիչ, բեմադրիչ **Վահե Շահվերդյանը** հանդիսականներին ներկայացրեց Ռազմիկ Դավոյանի հրաշալի պոեզիայի ընտրանի, հայտնի դերասանների, ասմունքողների մեկնությամբ, համեմված բեմական հետաքրքրական լուծումներով, լուսային էֆեկտներով ու երաժշտության ճիշտ ընտրությամբ: Այդ ամենին գումարվեց նաեւ բեմի ձախ անկյունում, օրվա հոբելյարի համար հատկացված «գահը», որտեղ բազմել էր Ռազմիկ Դավոյանը ու մերթընդմերթ միանում էր ասմունքողներին, հնչեցնում իր ստեղծագործությունները:

*Հանելուկ է հավերժական, կամ առեղծված անթերի՝*

*Մարդը խավար մի զանգված է, բայց նման է կանթեղի:*

*Տրորվում է իր մթի մեջ, սակայն լույս է ճառագում.-*

*Խտանում է մութն անընդհատ, լույսը, ավա՜ղ, բարակում...*

Հոբելյանական այդ օրը Ռազմիկ Դավոյանին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը անձամբ հանձնեց «Առաջին աստիճանի շքանշան»՝ հայրենիքին մատուցած ծառայությունների համար: Հաջորդ պարգեւին՝ Մայր Աթոռի «Սուրբ Սահակ, սուրբ Մեսրոպ» շքանշանին Ռազմիկ Դավոյանն արժանացել է իր ազգանվեր ծառայությունների համար: Վալերի Բրյուսովի անվան «Ոսկե մեդալը» այդ օրը հանձնվեց հոբելյարին, համալրելով նրա կրծքի շքանշանների շարքը: Հանդիսության ավարտին հոբելյարը շնորհակալական խոսք հղեց անվանի դերասաններին, երգիչներին ու երեկոյի կազմակերպիչներին, իրեն նոր ստեղծագործական խթան, մուսա պարգեւելու համար ու հրաժեշտ տվեց ասելով՝ բանաստեղծները չեն ծերանում... դեռ շատ անելիքներ ունենք...:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## «ԱրմենՏել»-ը հովանավորում է Տիգրան Մեծի 2150-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շարքը

ԱրմենՏել ՓԲԸ-ն (հովանավորում է Տիգրան Մեծի 2150 ամյակին նվիրված ճանաչված նկարիչների աշխատանքների ցուցահանդեսը: Դեկտեմբերի 1-ին Հայաստանի Ազգային պատկերասրահում բացված ցուցահանդեսն առաջինն է հոբելյանական միջոցառումների շարքում, որտեղ ներկայացված են նաև Տիգրանակերտի պեղումների ժամանակ հայտնաբերված նմուշները:

Ցուցահանդեսի ավարտին կտպագրվի պատկերագիրք, որում Ազգային պատկերասրահում ցուցադրված ստեղծագործությունների վերատպումներից բացի կներառվեն նաև Տիգրան Մեծի կյանքին և գործունեությանը նվիրված գիտահանրամատչելի հոդվածներ և փաստաթղթեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

«Որպես ռուս ժողովրդի ներկայացուցիչ ցանկանում եմ իմ հիացմունքը հայտնել հայ ժողովրդի դարավոր պատմության հանդեպ. մի ժողովրդի, ով հազարամյակներ շարունակ պահպանել է փառավոր անցյալի ժառանգությունը: Իմ կարծիքով, այսօր հատկապես կարևոր է պահպանել Հայոց Մեծ թագավորի հիշատակը և ապահովել ազգային ավանդույթների փոխանցումը սերնդե սերունդ: Մենք ուրախ ենք սատարելու նման նախագծերը, քանի որ հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանումը կարևոր տեղ է զբաղեցնում ԱրմենՏել ընկերության սոցիալական ծրագրերում, որոնք իրականացվում են Հանուն պայծառ ապագայի կարգախոսի ներքո», նշեց ԱրմենՏել ՓԲԸ-ի Գլխավոր տնօրեն **Իգոր Կլիմկոն**:

Ցուցահանդեսն անցկացվում է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հովանու ներքո: Կազմակերպիչներն են՝ Արարատյան Հայրապետական թեմը, Աշխարհի հայ նկարիչների միավորումը, Հայաստանի ազգային պատկերասրահը և Ազգային գեղագիտության կենտրոնը:

Տիգրան Մեծի 2150 ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների թվում են նաև Մեծ թագավորի մասին վավերագրական ֆիլմի ցուցադրությունը և երիտասարդ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսը:

# Մարզական

## Հայ պատանիները ջախջախեցին թուրքերին

Թուրքիայում անցկացվող շախմատի համաշխարհային պատանեկան օլիմպիադան ընթանում է մրցակիցների նկատմամբ հայ շախմատիստների գերակշիռ առավելությամբ: Մեր հավաքականը պարզապես հիացնում է իր վստահ խաղով՝ մեկը մյուսի հետեւից պարտության մատնելով հակառակորդներին:

6-րդ տուրում Հայաստանի հավաքականի մրցակիցը Թուրքիայի 4 հավաքականներից ուժեղագույնն էր՝ «Կարմիրները», որը 14,5 միավորով ընթանում էր 2-րդ տեղում եւ ընդամենը 2 միավորով էր զիջում մերոնց: Ուստի թուրքերի հետ մրցախաղում առաջատարի դիրքն ավելի ամրապնդելու համար մեր շախմատիստներին հարկավոր էր հնարավորինս խոշոր հաշվով հաղթել մրցակցին: Եվ դա մեր շախմատիստները հիանալի իրագործեցին՝ 3,5-0,5 հաշվով ջախջախելով թուրքերին:



Միակ կես միավորը Սեզեն Ուֆուկի հետ մրցավեճում Թուրքիայի հավաքականին պարգեւեց 4-րդ խաղատախտակի վրա հանդես եկող Դավիթ Շահինյանը: Ի դեպ, դա վերջինիս առաջին ոչ-ոքին էր: Մինչ այդ Դավիթը 3 հաղթանակ էր տոնել:

Կրկին իր բարձրության վրա էր մեր թիմի առաջատար Կարեն Գրիգորյանը, որը 6-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Քեմիլ Ալի Մարանդիի նկատմամբ: Կարեն Գրիգորյանը շարունակում է ոսկե մեդալի գլխավոր հավակնորդ լինել 1-ին խաղատախտակի վրա: Նրա մոտակա մրցակիցներ Մախսաթ Աթաբաեւն ու Էնգին Տոպակը 6 հնարավորից 4,5-ական միավոր են վաստակել:

Գրիգորյանի հաղթարշավը շարունակեցին խաղընկերները՝ Ռոբերտ Աղասարյանն ու Հովհաննես Գաբուզյանը, որոնք պարտության մատնեցին համապատասխանաբար Վահապ Սանալին եւ Բաթուհան Դաստանին:

Այս հաղթանակից հետո Հայաստանի հավաքականն ավելի ամրապնդեց առաջատարի իր դիրքը եւ վստահ քայլերով գնում է դեպի օլիմպիական բարձունքը: Մեր թիմն ունի 20 միավոր եւ արդեն 4 միավորով գերազանցում է 2-րդ տեղում ընթացող Ռուսաստանի եւ Բելառուսի ընտրանիներին, որոնց ի դեպ հաղթել է: Ռուսները 3-1 հաշվով պարտության մատնեցին պորտուգալացիներին, իսկ բելառուսները 4-0 հաշվով ջախջախեցին Թուրքիայի մյուս հավաքականին: 15,5-ական միավորով հաջորդ տեղերում են Հնդկաստանի եւ Ուզբեկստանի հավաքականները: Հնդիկները 3-1 հաշվով հաղթեցին Սիրիայի ընտրանուն, իսկ ուզբեկ շախմատիստները պարտության մատնեցին Կանադայի թիմին (3,5-0,5):

Մրցաշարի ավարտին մնացել է 4 տուր: Համոզված ենք, որ հայ շախմատիստները վերելքով հանդես կգան նաեւ օլիմպիադայի վերջնագծում, մանավանդ որ առաջատարների խմբում գտնվող հավաքականների հետ նրանք արդեն հանդիպել են եւ վերջին տուրերում ավելի թույլ մրցակիցների հետ են մրցելու: Մասնավորապես 7-րդ տուրում մեր պատանիները խաղալու են ուզբեկների հետ: Կարեւոր մրցախաղեր են նաեւ Հնդկաստան-Ռուսաստան, Բելառուս-Թուրքիա «Կարմիրներ» հանդիպումները:

## Ֆուտբոլիստները պատրաստվում են գործադուլի

Իտալացի ֆուտբոլիստների արհմիությունը որոշել է բոյկոտել դեկտեմբերի 11-ին եւ 12-ին կայանալիք երկրի A սերիայի 16-րդ տուրի հանդիպումները: Նրանք դժգոհ են ակումբներում ստեղծված պայմաններից, ինչպես նաեւ ֆուտբոլի ֆեդերացիայի առաջարկած կոլեկտիվ պայմանագրից:

Առաջնության հանդիպումները բոյկոտելու որոշումը իտալացի ֆուտբոլիստները կայացրել էին դեռեւս սեպտեմբերին: Այն ժամանակ նրանք գտնում էին, որ առանց կոլեկտիվ պայմանագրի, որի ժամկետը լրացել էր նախորդ մրցաշրջանի ավարտին, չարժե խաղալ: Ճիշտ է, հաջողվեց կոնֆլիկտը հարթել եւ 5-րդ տուրը կայացավ: Այժմ ֆուտբոլիստները կրկին հիշել են, որ աշխատանքային պայմանագիր չունեն, ուստի որոշել են բոյկոտել 16-րդ տուրի խաղերը:

Իտալիայի ֆուտբոլի ֆեդերացիայի ներկայացրած կոլեկտիվ պայմանագրի 8 կետերից 6-ը ֆուտբոլիստները համաձայնել են քննարկել, իսկ 2 կետ մերժել են: Դրանցից մեկն ուսումնամարզական գործընթացին է վերաբերում: Լիգան առաջարկում է մարզիչներին թիմը բաժանել ուժեղ եւ թույլ խաղացողների խմբերի: Բոլոր ֆուտբոլիստներն էլ պետք է պատրաստ լինեն թույլ խմբում հայտնվելու եւ դա բնականոն պետք է համարեն: Բացի այդ, կոլեկտիվ պայմանագրում բժշկական սպասարկմանը, ֆուտբոլիստների տուգանքների, ազատ ժամանակ նրանց զբաղմունքին վերաբերող կետեր կան:

Սակայն համաձայնության հարցում գլխավոր խոչընդոտը կարող է դառնալ ֆուտբոլիստի վաճառքի վերաբերյալ կարգը, երբ վերջինս չի ցանկանում հեռանալ թիմից: Նախկինում ֆուտբոլիստը կարող էր հրաժարվել այլ թիմ տեղափոխվելուց, եթե տրանսֆերային պայմաններում նրան ինչ-որ բան ձեռնտու չէր: Իսկ նոր պայմանագրով ֆուտբոլիստը պարտավոր է հեռանալ թիմից, եթե դա է պահանջում ակումբի ղեկավարությունը, իսկ նոր թիմում աշխատավարձը գրեթե նույնն է: Եթե ֆուտբոլիստը հրաժարվում է հեռանալ թիմից, ապա նրա պայմանագիրն ակումբի հետ անմիջապես չեղյալ է համարվում, իսկ նրան որպես փոխհատուցում տրվում է աշխատավարձի 50 տոկոսը: Արհմիությունը դեմ է կոլեկտիվ պայմանագրում նման կետի առկայությանը:

## Կազանում մեկնարկել է ֆուտբոլային մարաթոնը

Կազանում, որտեղ 2013-ին անցկացվելու է համաշխարհային Ունիվերսիադան, երեկ առավոտյան մեկնարկեց ֆուտբոլային մարաթոնը, որով կազմակերպիչները ցանկանում են աջակցել 2018-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության համար Ռուսաստանի ներկայացրած հայտին: Ֆուտբոլային յուրօրինակ մարաթոնը կտեւի 33 ժամ 33 րոպե (2013 րոպե): Եզրափակիչ ակորդին ականատես կլինեն Ցյուրիխում, որտեղ այսօր կայանալու է 2018-ի եւ 2022-ի աշխարհի առաջնությունների կազմակերպիչ երկրների քվեարկության արարողությունը:

Կազանի «Կենտրոնական» մարզադաշտում մրցապայքար դուրս եկան Թաթարստանի կառավարության հավաքականն ու Կազանի քաղաքապետարանի թիմը: 45 րոպեն մեկ թիմերի կազմերը փոփոխվում են: Ընդհանուր առմամբ խաղին կմասնակցեն 1200 ֆուտբոլիստներ, որոնց թվում կլինեն ուսանողներ, դպրոցականներ, մարզադպրոցի սաներ: Ֆուտբոլային յուրօրինակ այդ հանդիպումը կավարտվի այսօր, Երեւանի ժամանակով 18:33-ին, երբ Ցյուրիխում կսկսվի քվեարկությունը:

## Մոուրինյուն որակազրկվել է 2 խաղով

ՈւԵՖԱ-ի կարգապահական կոմիտեն մի շարք վճիռներ է կայացրել նոյեմբերի 23-ին չեմպիոնների լիգայի մրցաշարում կայացած «Այաքս»-«Ռեալ» հանդիպման մասնակիցներից ոմանց նկատմամբ: Հիշեցնենք, որ այդ խաղում «Ռեալի» 2 ֆուտբոլիստ՝ Սերխիո Ռամոսն ու Խաբի Ալոնսոն միտումնավոր 2-րդ դեղին քարտերն էին ստացել ու հեռացվել էին խաղադաշտից:

Մադրիդի «Ռեալի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն, որի ցուցումով էին Ռամոսն ու Ալոնսոն նման արարք կատարել, որակազրկվել է եվրոգավաթների խաղարկության 2 խաղով, ընդ որում 2-րդը՝ պայմանական 3 տարի ժամկետով: Բացի այդ, պորտուգալացի մարզիչը տուգանվել է 40 հազար եվրոյով:

Խաբի Ալոնսոն եւ Սերխիո Ռամոսը տուգանվել են 20 հազարական, Իկեր Կասիլյասը՝ 10 հազար, Եժի Դուդեկը՝ 5 հազար եվրոյով: Ալոնսոյի եւ Ռամոսի ստացած կարմիր քարտերը մնացել են ուժի մեջ, ուստի ֆուտբոլիստները որակազրկվել են մեկ խաղով: Մադրիդի «Ռեալը» տուգանվել է 120 հազար եվրոյով:

### ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

## ՀԱՕԿ-ի ծրագիրը լավագույնն է Եվրոպայում

**Ինչպես տեղեկացանք ՀԱՕԿ-ի լրատվության պատասխանատու Նաթելա Հովսափյանից, Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում անցկացվել է Եվրոպայի օլիմպիական կոմիտեի (ԵՎՕԿ) գլխավոր համաժողովը: 49 երկրների ազգային օլիմպիական կոմիտեների պատվիրակների թվում էր նաեւ ՀԱՕԿ-ի գլխավոր քարտուղար Հրաչյա Ռոստոմյանը:**

**Համաժողովի մասնակիցները ջերմորեն շնորհավորել են Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեին՝ հիմնադրման 20-ամյակի առթիվ եւ հետագա բեղմնավոր ու արդյունավետ աշխատանք ցանկացել: Ուրախալի է, որ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի կողմից 2010-ի «Սպորտը բոլորի համար» ծրագրի շրջանակներում անցկացրած միջոցառումը ճանաչվել է լավագույնը Եվրոպայում: Այն կայացել է ՄՕԿ-ի հովանու ներքո, «Օլիմպիական համերաշխություն» կազմակերպության ծրագրի շրջանակներում:**

**Հաշվետվություններով հանդես են եկել ԵՎՕԿ-ի նախագահը, գլխավոր քարտուղարը, տարբեր հանձնաժողովների պատասխանատուները: Նախապատրաստական աշխատանքների մասին խոսել են «Լոնդոն-2012», «Սոչի-2014» օլիմպիական խաղերի, 2011-ին Չեխիայի Լյուբերեց քաղաքում անցկացվելիք ձմեռային եւ թուրքական Տրաբզոնում կայանալիք ամառային երիտասարդական փառատոների կազմկոմիտեների ներկայացուցիչները: Նրանք հավաստիացրել են, որ ամեն բան ընթանում է պատշաճ մակարդակով եւ իրենք կանեն ամեն ինչ այդ կարեւոր մարզահանդեսները լավագույնս անցկացնելու համար:**

**Համաժողովը հաստատել է նաեւ 2015-ին կայանալիք երիտասարդական փառատոների անցկացման վայրերը: Ամառայինը կհյուրընկալի Լիխտենշտեյնը, ձմեռայինը՝ Թբիլիսին:**

**Հրաչյա Ռոստոմյանը առանձնազրույց է ունեցել ԵՎՕԿ-ի նախագահ Պատրիկ Հիկեի հետ: Վերջինս գոհունակություն է հայտնել ՀԱՕԿ-ի կատարած աշխատանքների համար: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ԵՎՕԿ-ի տարբեր հանձնաժողովներում ընդգրկվեն հայաստանցի մասնագետներ: Թեկնածուներին կներկայացնի մեր ազգային օլիմպիական կոմիտեն, իսկ հարցը վերջնականորեն կքննարկվի 2014-ին Սոչիում անցկացվելիք ԵՎՕԿ-ի գլխավոր ասամբլեայում:**

**Հ. Ռոստոմյանը հանդիպումներ է ունեցել նաեւ Լատվիայի, Լիտվայի, Ռուսաստանի, Մալթայի, Իսրայելի, Կիպրոսի, Ավստրիայի, Վրաստանի եւ էլի մի քանի երկրների պատվիրակների հետ: Քննարկվել են համագործակցության կապերն ամրապնդելու, փոխադարձ այցելություններ կատարելու հարցերը:**

## Մխիթարյանը հաջող է մեկնարկել

**Բրազիլահայ շախմատիստ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը հաղթանակով մեկնարկեց շախմատի Բրազիլիայի առաջնությունում, որի պարգեւներն են վիճարկում 12 մասնակիցներ: Մեկնարկային տուրում Մխիթարյանը պարտության մատնեց գրոսմայստեր Գիլբերտո Միլոշին: 2-րդ տուրում հայ շախմատիստը հաշտություն կնքեց Էվերալդո Մացուրայի հետ:**

**2 տուրից հետո Մխիթարյանը 1,5 միավորով 2-5-րդ տեղերն է բաժանում Ջովանի Վեսկովիի, Ալեքսանդր Ֆիեռի, Ռաֆայել դի Բեռարդինոյի հետ: 2 միավորով աղյուսակը գլխավորում է Ռաֆայել Լեյթաոն, որը հաղթել է Բոլիվար Գոնսալեսին ու Պաուլո Զաթոբային:**

**3-րդ տուրում Մխիթարյանը կմրցի Ֆելիպե Էլ Դեբսի հետ: Անհատական վարկանիշով (2525) Մխիթարյանը մասնակիցների մեջ 4-րդն է Ռաֆայել Լեյթաոյից (2626), Ջովանի Վեսկովիից (2622) եւ Ալեքսանդր Ֆիեռից (2572) հետո:**

## «Մեդրոնը» տխուր ռեկորդների հեղինակ է

**Անգլիական «Մեդրոն» թիմը, որը հանդես է գալիս երկրի առաջնության 13-րդ դիվիզիոնում, հայտնի է դարձել ողջ Եվրոպայում իր տխուր ռեկորդներով: Առաջնության վերջին 11 հանդիպումներում թիմը բաց է թողել 220 գոլ: Իսկ խաղերից մեկում «Մեդրոնը» պարտվել է 0-55 հաշվով:**



**«Մեդրոնի» գլխավոր մարզիչ, 68-ամյա Ալան Դեւենպորտը գտնում է, որ իր թիմը վատագույնն է Անգլիայում: Սակայն «Մեդրոնը» շարունակելու է ելույթներն առաջնությունում:**

**Նախորդ մրցաշրջանի արդյունքներով թիմը Կոռնուոլ կոմսության սիրողական լիգայի առաջին դիվիզիոնից տեղափոխվել էր 2-րդ խումբ: Թիմից մի խումբ ֆուտբոլիստներ են հեռացել, որոնց փոխարինել են ուսանողները եւ տեղի պանդոկ հաճախորդները: Երբեմն «Մեդիսոնը» չի կարողանում 11 ֆուտբոլիստ հավաքագրել հերթական հանդիպմանը: Հենց դրանով էլ պայմանավորված էր նոյեմբերի 20-ին «Իլոգանի» հետ խաղում գրանցված գերխոշոր 0-55 հաշիվը: Այդ խաղում «Մեդրոնը» խաղադաշտ էր դուրս եկել ընդամենը 7 ֆուտբոլիստով, իսկ դարպասը պաշտպանում էր դաշտային խաղացողը:**

**Չնայած այս ամենին, «Մեդրոնը» մրցաշարի հետնապահը չէ: Աղյուսակը եզրափակում է «Ստորմը», որը եւս պարտվել է անցկացրած բոլոր հանդիպումներում, իսկ մեկ խաղի չներկայանալու համար թիմից 3 միավոր է հանվել: Այսինքն այժմ «Ստորմը» -3 միավոր ունի:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

## Օրվա հետքերով

# Ղարաբաղյան հիմնահարցը դեռեւս ռազմի դաշտում է լուծվել

*Թերեւս դա է պատճառը, որ Մինսկի խմբի երկրները ամեն մի գագաթաժողովի նախօրյակին «կարգավորման ջանքերն ակտիվացնելու» կոչով են բավարարվում*




Երեկ Աստանայում 11 տարվա ընդմիջումից հետո հրավիրվեց ԵԱՀԿ գագաթաժողովը, որի աշխատանքներին մասնակցում են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն ու 38 երկրների պետության ու կառավարության ղեկավարներ։ Գագաթաժողովի օրակարգում կարեւոր տեղ են զբաղեցնում Հարավային Օսիայի եւ Աբխազիայի խնդիրները։ Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, ապա ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների բացակայությամբ արդեն քննարկվել է, նույնիսկ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հանդես են եկել հայտարարությամբ։

Այս հայտարարությունը, հակառակ Հայաստանում հայի ազգանունով թուրք-ադրբեջանական քարոզչություն ծավալող պնակալեզ թափթփուկների «հակամարտության կարգավորման համար բեկումնային որոշումների ընդունման» ցանկատեսությանը, միանգամայն անբովանդակ է։ Ի դեպ, դա կանխավ ենթադրելի էր, ընդ որում՝ ոչ միայն գագաթաժողովում Մինսկի խմբի համանախագահող երկրներից Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի նախագահների բացակայության, այլեւ՝ ղարաբաղյան պատերազմում Ադրբեջանի կրած խայտառակ պարտության պատճառով։

Այլ կերպ, արցախահայությունը մայր հայրենիքի օգնությամբ ոչ միայն արժանի հակահարված է տվել «սումգայիթյան հերոսներ» հորջորջվող ադրբեջանական ոհմակներին, այլեւ ստիպել է, որ Ադրբեջանը զինադադարի խնդրանքով բացի Հայաստանից, դիմի նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանն ու դրանով վերջնականապես լուծել է ղարաբաղյան հիմնահարցը։

Ըստ երեւույթին, հիմնահարցի ռազմի դաշտի կարգավորման փաստի հետ ի սկզբանե հաշտվել են Մինսկի խմբի համանախագահող երկրները՝ ԱՄՆ-ը, Ֆրանսիան եւ Ռուսաստանը, որ նրանք ամեն մի գագաթաժողովի կամ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման նախօրյակին «կարգավորման ջանքերն ակտիվացնելու» վերացական կոչ են անում կողմերին եւ դրանով էլ բավարարվում։

Կարծում ենք՝ այս պարզ ճշմարտությունը կհասկանա նաեւ ադրբեջանցի հրոսակը, եթե ի վիճակի լինի բանականությունը գերադասել ոհմակային բնազդից։ Հարկ է սակայն նշել, որ ղարաբաղյան հակամարտության պարագայում խնդիրը ադրբեջանցի հրոսակի ոհմակային բնազդը չէ, այլ Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացմանը զուգընթաց հակամարտությունը կարգավորելու Թուրքիայի ապարդյուն ջանքերը, որոնք ԱՄՆ-ի, ԵՄ-ի եւ Ռուսաստանի հակազդեցությանը բախվելիս, միաժամանակ պատճառ են դարձել, որ միջազգային այս ուժերը փոխեն նշված երկու գործընթացների առաջնահերթությունը եւ նախապատվությունը տան նորմալացման գործընթացին։

Այս հանգամանքը եւս նախապես կանխատեսելի էր դարձնում, որ Աստանայի գագաթաժողովում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների՝ Լեռնային Ղարաբաղին առնչվող հայտարարությունը լինելու է սովորականի պես անբովանդակ։ Ինչ վերաբերում է նախապատվությունը Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացին տալու հանգամանքին, ապա նախորդ համարում նշել էինք, որ Թուրքիան, ձախողելով Արեւմուտքի նախաձեռնությամբ սկզբնավորված այս գործընթացը, ձախողման է դատապարտել վերջինի համապատասխան ծրագրերը։

Դա Թուրքիային կանգնեցնում էր հակազդեցությանը բախվելու փաստի առջեւ, իսկ նա ճնշումներից խուսափելու համար պատրանք էր ստեղծում, թե հայկական կողմի հետ շարունակվում են դիվանագիտական լուռ շփումները, ուստի շուտով կսկզբնավորվի գործընթացի երկրորդ փուլը։

Միջազգային հանրությանը ապակողմնորոշելու թուրքական այս նկրտումները ի չիք դարձրեց ՀՀ արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանի** հոկտեմբերի 12-ին «Ուոլ սթրիթ ջորնըլում» հրապարակված հոդվածը, որտեղ նա գրել է. «Չկա ո՛չ «լուռ դիվանագիտություն», ո՛չ Ցյուրիխի «երկրորդ շրջան», ո՛չ էլ բանակցությունների որեւէ նոր փուլ»։

Ստեղծված իրավիճակում թուրքական կողմը, որը մինչ այդ փորձում էր նորմալացման գործընթացի ձախողումը բարդել Հայաստանի վրա, սկսեց «2011-ին դրական զարգացումների» հավաստիացումներով արդարանալ, թե հետամուտ է գործընթացին՝ հիշատակելով արդեն ոչ թե Լեռնային Ղարաբաղի, այլ հարակից շրջանների մասին միայն, ինչն, այնուամենայնիվ, դրական զարգացում է Թուրքիայի պարագայում։

Այս ամենի առումով հասկանալի է նոյեմբերի 26-ին նախագահ **Աբդուլլահ Գյուլի** Շվեյցարիա կատարած այցը, որտեղ նա շվեյցարացի գործընկերոջ հետ մամուլի համատեղ ասուլիսում, «Սթար» թերթի վկայությամբ, ասել է. «Մենք կարեւոր նշանակություն ենք տալիս Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացմանը եւ շրջակա երկրների հետ բարիդրացիությանը։ Ղարաբաղը գուցե վիճելի տարածք է, սակայն Ադրբեջանի հողերի մի մասն օկուպացված է։ Եթե դա այդպես շարունակվի, ապա կարող եք հայտնվել վտանգավոր այլ իրավիճակում։ Կարգավորման համար պետք է ջանքեր գործադրել»։

Նոյեմբերի 28-ին ինքնաթիռում Անկարա վերադառնալիս նախագահ Գյուլը, ինչպես թուրքական հանրայինն է նշում, արտահայտվել է «2011-ին ակնկալվող դրական զարգացումների» մասին եւ ասել է, որ Շվեյցարիան Կիպրոսի ու Հայաստանի հարցերում վերստին ցանկանում է միջնորդական առաքելություն դրսեւորել։ Ապա նա ավելացրել է. «Այդպիսի հարցերում շվեյցարացիները միջնորդությամբ հանդես գալու դիվանագիտական ավանդույթ ունեն։ Ես էլ աջակցում եմ նրանց։ Խորհրդակցում ենք»։ Նույն օրը Վաշինգտոնում արտգործնախարար **Ահմեդ Դավութօղլուն** լրացրել է նրան. «Շարունակում ենք պաշտպանել Հայաստանի հետ ստորագրված արձանագրությունները։ Դեռեւս չենք հանձնվել»։

Ինչ վերաբերում է Արեւմուտքի առաջնահերթությունների՝ հօգուտ Հայաստան-Թուրքիա նորմալացման փոփոխությանը, ապա դա էլ արտացոլում է լոնդոնյան Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտը «Հայ-թուրքական հաշտեցման փշրված հույսերը» հրապարակման մեջ, որին բացի «**Ազգից**», նոյեմբերի 25-ին անդրադարձել էր թուրքական haberx.com կայքէջը։

Ըստ կայքէջի, ինստիտուտը, համարելով քիչ հավանական նորմալացման գործընթացի կարճ ժամանակահատվածում արդյունքի հանգելը, այնուամենայնիվ, անդրադառնում է դրան նպաստող գործոններին եւ նշում. «Կարեւոր ազդակներից մեկն էլ այն փաստարկներն են, ըստ որոնց նորմալացման գործընթացին կտրականապես հակադրվող Ադրբեջանն այդ հարցում վերանայել է իր դիրքորոշումը, քանի որ գործընթացը կանխելու պատճառով ավելի ծանր կացության մեջ է հայտնվել։ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը չլուծելու առումով Թուրքիայի ճնշումներին ենթարկվող Ադրբեջանը՝ սկսած 2000-ից, թեեւ անընդմեջ ավելացնում էր ռազմական ծախսերը, սակայն հակառակ դրան, շատ քչերն են հավատում, որ Բաքուն ի վիճակի է զենքի ուժով վերցնել Լեռնային Ղարաբաղն ու օկուպացված տարածքները»։

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Ալիեւը հռչակագրի հրապարակումից մի քանի ժամ հետո արդեն խախտեց նրա ոգին

Առնվազն չտեղեկացվածները կարող էին կարծել, թե Աստանայում ինչ-որ լուրջ փաստաթուղթ կարող է ստորագրվել, կամ էլ այն մարդիկ, ովքեր դրսի իմպուլսներն են բերում մեր հասարակություն։ Բայց երեկ Աստանայում ԵԱՀԿ գագաթաժողովի ընդհանուր մթնոլորտն ու հնչած հայտարարությունները խոսում են այն մասին, որ չնայած միջնորդների վճռականությանը՝ ինչ-որ բան փոխելու ղարաբաղյան կարգավորման հարցում, կողմերը, հատկապես Ադրբեջանը, իրականում դեռ պատրաստ չեն այն հանգրվանին, որ կոչվում է տեսակետների մերձեցում։ Միայն այն փաստը, որ ՌԴ նախագահը նույն օրը լքել է Աստանան, կասկածներ է հարուցում գագաթաժողովի վերաբերյալ արդյունավետության առումով, մինչ այդ էլ Սարկոզիի եւ Օբամայի ներկա չլինելը արդեն իսկ մի փոքր խամրեցրել էր գագաթաժողովի կարեւորությունը։

Ի՞նչ մտապահեցինք Աստանայից եկող տեղեկատվությունից. այն, որ Ալիեւը երեկյան պարտվել է մի քիչ՝ առավոտյա հնգակողմ հայտարարությունից հետո օրվա վերջում մի ծավալուն զեղում ունենալով՝ «ԼՂ-ն Ադրբեջանի տարածք է» եւ այլն, ակնհայտ անհեթեթություն դուրս տվել՝ թե Հայաստանը նախընտրում է հակամարտության ծավալման ճանապարհը, ուզում է պահել «ստատուս քվոն» եւ բանակցությունները վերածել անիմաստ գործընթացի։ Միայն այն, որ Ալիեւն ու Սարգսյանը չեն հանդիպել (համենայն դեպս՝ այդպիսի լրատվություն կար երեկվա համար՝ մատնանշելով դիվանագիտական աղբյուրներ), եւ դրա մեղքն Ալիեւի հրաժարիմքն է, շատ բան է ասում բանակցային գործընթացի այս պահի մասին։ Դավութօղլուն քաշել է դամը, թե մինչեւ Ղարաբաղի հարցը չլուծվի՝ սահմանի բացում չիք, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն է հորդորել Հայաստանին եւ Ադրբեջանին՝ ձեռնպահ մնալ շփման գծում սադրանքներից, իսկ դիպուկահարներին հեռացնել առաջին գծից։ Մեդվեդեւն իր ելույթում ասել է, թե հակամարտությունների լուծման ժամանակ ռազմական ուժի կիրառումը բացարձակապես անընդունելի է, եւ ԵԱՀԿ-ն հակամարտությունների կիրառման միասնական սկզբունքներ պետք է մշակի (ուժի կիրառումից հրաժարում, կողմերի համաձայնությամբ կարգավորում, հարգանք առկա միջնորդական եւ բանակցային ձեւաչափերի նկատմամբ, հակամարտության գոտու բնակչության իրավունքների հարգում), եւ դրանք պետք է կիրառվեն միշտ եւ առանց ընտրության։ Սակայն ընդհանուր առմամբ՝ հնգակողմ հռչակագրի, Ալիեւի պահվածքի եւ ելույթի հակասականությունը խոսում է այն մասին, որ գործնական առաջընթաց ղարաբաղյան խնդրում Աստանայում չկա եւ չէր կարող լինել։

Իհարկե, համանախագահներ-Հայաստան-Ադրբեջան հնգակողմ հռչակագիր-հայտարարությունը տեսականորեն կարելի է որոշ առումով Հայաստանի համար դրական գնահատել, բայց դա ընդամենը թուղթ է, քանի որ այդ հռչակագրի ոգին դրա հրապարակումից ընդամենը մի քանի ժամ հետո Ալիեւը խախտել է իր ելույթով։

Երեկ ուշ երեկոյան հնչած առաջին սուղ քաղաքական գնահատականները եւս զուսպ էին. ԲՀԿ-ից **Արամ Սաֆարյանը** ԼՂ խնդրի վերաբերյալ հռչակագիրը կողմերին ուղղված ամենահետեւողական փաստաթուղթն անվանեց, որը ջանքերը շարունակելու ու կարգավորման հարցում գործնական քայլերի գնալուն է ուղղված՝ կարեւոր համարելով ուժի չկիրառման մասին հիշատակումը, եւ նշելով, որ այդ հռչակագիր-հայտարարությունը կրկնում է մինչ այդ Մոսկվայի հռչակագրից, Պետերբուրգի նորացված սկզբունքներից բխող մոտեցումները։ ՀՀԿ-ից **Արտակ Դավթյանի** կարծիքով՝ կարգավորման այս կամ այն սկզբունքը այլ հարթություններ տեղափոխելը, կամ միմյանց նկատմամբ գերակա ներկայացնելը չէր բխում բանակցային տրամաբանությունից, եւ ոչ էլ ԼՂ հարցի լուծմանը կարող է նպաստել։ Այս իմաստով դրական է, որ կարգավորման բոլոր սկզբունքներն առնված են մեկ ամբողջական հայտարարության մեջ՝ դրանցից ամեն մեկը տարբեր հարթություններում չդիտարկելով։

Իսկ ընդհանուր առմամբ ամեն ինչ այնպես է, ինչպես միշտ՝ Ալիեւը հոխորտում է, մոռանալով, որ նախապես համաձայնել է հնգակողմ հայտարարության կառուցողական դրույթներին, ապա իր դիրքորոշման անհեթեթությունը զգալով՝ հրաժարվում է Հայաստանի նախագահի եւ Ռուսաստանի նախագահի հետ հանդիպել՝ հուսախաբ անելով Մինսկի խմբի համանախագահներին։ Բա լավ՝ ո՞ւմ անունից էր հնգակողմ հայտարարությունը, որտեղ ասվում էր, թե ժամանակն է կարգավորել ղարաբաղյան հակամարտությունը։

Այսօր տեսնենք, թե ի՞նչ է պատասխանելու այդ ամենին Հայաստանի նախագահն իր ելույթում։ Միայն դրանից հետո հնարավոր կլինի քաղաքական հանրագումարի գալ Աստանայի վերաբերյալ։

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Գնանշման հարցման ծածկագիրը՝ ՓԱԲ-ԳՀՎՊՁԲ-10/4

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը «Պատվիրատու», որը գտնվում է ք. Երեւան, Իսակովի 24 հասցեում, հայտարարում է ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-10/4 ծածկագրով գնանշման հարցում։

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգիչների եւ օժանդակ սարքավորումների ձեռքբերումը։

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք, կարող են մասնակցել գնանշման հարցմանը անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից։

Գնանշման հարցման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 8-րդ օրը, ք. Երեւան, Իսակովի պ. 24, 207 սենյակ հասցեով, հեռ.՝ 77-77-10 (152) Վ. Հովհաննիսյանին։

Գնանշման հարցման հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար՝ 850 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի «Պրոմեթեյբանկ» ՍՊԸ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 1660000390310100 հաշվեհամարին։ Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող վճարի անդորրագիրը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, գնանշման հարցման հրավերը տրամադրել հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին։ Գնանշման հարցման հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա։

Գնանշման հացման հայտերն անհրաժեշտ է կազմել հայերեն լեզվով եւ ներկայացնել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի, ք. Երեւան, Իսակովի պ. 24 հասցեով, 207 սենյակ, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 11.00-ը։

ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ

Ջանոյան և Ավետիսյան ընտանիքները խոր վշտով գուժում են ամուսնու, հոր, պապի՝

**ՋԱՆԻԿ ԱՐՏԱՇԵՍԻ ՋԱՆՈՅԱՆԻ**

մահը

Հոգեհանգիստը՝ այսօր, դեկտեմբերի 2-ին, ժամը 18-ին Աղայան, 9, բն. 100 հասցեով

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝1.12.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: